



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԵՎ ԷԺՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆԸ



ԳՐ. բան. ՊԵՏՐՈՎ

ՆՈՐ
ԼՈՅԱ

Ա. Բ.

1905
Ա. ՊԵՏՐՈՎ

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հրատ. տիկին Զաքելի

891.7

7-50

Mr. Goffe Humphrey:

ՆՈՐ ԼՈՅԱ

ՄԱՆՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ

(Հուսեղենից)

1002
5480

ԳՐ. թահ. ՊԵՏՈՎ



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՀՎԳ

«ՊՐԵՎԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

1904.

22.07.2013

БИБ ЧОМ 65

72842



Дозволено Ценз. С. Петербургъ, 20 Октября 1904 г.

ՄԵՐ ՑՆՈՐՔՆԵՐԸ

Մարդկանց վերաբերմունքը դէպի կեանքը զանազան տեսակ է լինում՝ նայելով նրանց բնաւորութեանը:

Մի քանիսին կեանքը մռալ գոյներով է պատկերանում, ծանր ու անտանելի բեռն է թւում: Նրանց կարծիքով՝ կեանքի սովորական երկոյթները տանշանքն ու անյաշողութիւնները, վիշտն ու կոկիծներն են. իսկ ուրախութիւնը՝ միայն մի խարուսիկ պատրանք, զեղեցիկ ցնորք, անիրազորձելի երազ է — և աւելի ոչինչ: Բաւական է, որ ալդպիսի ձարդիկ

մի թեթև անյաջողութեան հանդիպին, որպէս զի յուսահատուին, ձեռքերը բաշ զցեն, կարծելով՝ թէ ամեն ինչ կորած է; Ծանր է այդպիսի մարդկանց կեանքը, աւելի ևս ճանր է դրանց հետ գործ ունենալը — դրանք շատ քիչ լոյս կարող են մացնել կեանքի մէջ:

Կան և այլ տեսակի մարդիկ, սրանք ընդհակառակը՝ ապագալին աշխոյժ, լուսաւոր ու վառ յոյսերով են նայում: Արանք հաստատուն հաւատ ունին գէպի ճշմարտութեան ու բարութեան ամենսայալթ ոյժու: Համողուած են, որ ո՞չ մի չարիք, ո՞չ մի կեղծիք ու ստութիւն չեն կարող դիմանալ անմնուրաց, անխարդախ ու տոկուն աշխատանքին: Անյաջողութիւնները սրանց չեն շփոթեցնում. սրանք զիտեն, որ սուրը բարձրացնողը և՛ կընկնի, և՛ կը զիրուի, և՛ վէրքեր կրստանայ: Այդ բոլոր անյաջողութիւնները հաւանական են, բայց չեն կարող նրանց յետ կանգնեցնել իրանց մտադրութիւնից: Ամեն մի պատահած քարից, թփից, խոտից պինդ բռնկով նրանք աւելի ու աւելի առաջ են գնում, բարձրնում են, մօտենում են արեին, լոյսին, աստուածալին ազատութեանը: Նրանք որքան շատ են առաջանում՝ իրերի հրաշալի գեղեցկութեան պատկերը նրանց առաջ աւելի ու աւելի լայն ու անսահ-

ման է բացւում և բարձրութիւնից՝ աարերի կաաարից նրանք կանչում են ներքել կանգնածներին.

— Մթութիւնից, խաւարից, ճահճալին մառախուղից, արծիճի ծանրութեան մռայլ ու թանձր ամպի տակից ալստեղ եկեք — այստեղ երկնքին մօտ է, ալստեղ օղն աւելի մաքուր է, շունչն աւելի ազատ, ալստեղ մարդու հոգին հանգստանում է:

Այս գրքոյկով մենք ուզում ենք մեր ընթերցողներին այլպիսի հաւատ ներշնչել գէպի լուսաւոր ապագալի, զարթեցնել ու պնդացնել նրա հոգու աշխուժութիւնը՝ կենդանի գործ կատարելու համար: Մենք կեանքի խաւար կողմերի առաջ աչքերս չենք փակում: Տեսնում ենք, որ չարութիւնն իր բոլոր գոյներով ու ձեւերով կարողանում է ժամանակ առ ժամանակ լայն բանալ իր խաւար թեերը և մութ, անթափանցելի տաճով ժամկել մարդկանցից ճշմարտութեան պայծառ լոյսը, ստուեր զցել նրա վրայ, կանել բարու և սիրոյ չերմութիւնը: Բայց և հաստատ հաւատում ենք, որ այդ չարիքը հիւանդոս ուռուցք է, որ կեսնքի խաւար բժերը կարելի է և պէտք է ոչնչացնել: Բայց հարկաւոր են գործին նուիրուած աշխատաւորներ, բարութեան և ճշմար-

տութեան անձնուրացութեամբ լցուած աղ-
նիւ հոգիներ, սիրով ու Աստծուն հանելի
կեանքով ոգեորուած սրտերը։ Այդպիսի մար-
դիկ միշտ եղել են աշխարհում և մեր մէջ էլ
կան։ Միայն թէ դրանք մեծ մասամբ առան-
ձնացած են աշխարհում, չոկ-չոկ են գործում,
իսկ չարը կանդնած է նրանց առաջ որպէս
մի անանցանելի՝ մերկ պատ։ Դարերով հաւա-
քուել ու անել է չարութիւնը մարդու սրբ-
տում և մեր կեանքում կանդնած է նա որ-
պէս մի հսկայական լիո։ Նրա դէմ վարելիք
կուիւր երկար ու կատաղի պէտք է լինի և
հէնց այդ պատճառով էլ համերաշխ, միահա-
մուռ շանքեր է պահանջում։ Իրանց՝ աշխատա-
ւորներին էլ փոխադարձ օդնութիւն է հարկա-
ւոր։ յուսահատութեան, յոդնածութեան և
ոլժերի անկման ծանր ռոպէին անհրաժեշտ է
զոնէ կարեկցութեան մի խօսք, մի խրախու-
սանք լսել։

Իր կոչմանը հաւատարիմ քահանան, ուսու-
ցիչը, բժիշկը, չ'անբարոյականացած զիւղական
դրազիրը և հազարաւոր ուրիշ հասարակական
համեստ գործիչներ զիւղի պարզ կեանքում
աննկատելի կերպով կատարում են իրանց հա-
մեստ գործը, որը սակայն մեծ է Աստուծոյ
առաջ։ Անձրևի կաթիլը այնքան չնչին մի ոյժ

լինելով հանդերձ ծակում է ժայռը։ այդպէս
էլ զիւղական ազնիւ ու համեստ գործիչը տա-
րեցարի ծեծում ու չարդում է ժողովրդի
տղիտութեան ահռելի ժայռը։

Այնտեղ, ժողովրդի հոգու խորքերում, նրա
զաղտնարանում մտքի ու սրտի սքանչելի դան-
ձեր են թագնուած, որոնք գեռ ևս խոր ընի
մէջ են, բարոյական ու մտաւոր խաւարի
հաստ կեղեսվ են ծածկուած։ Այդ գանձերը
լոյս աշխարհ հանելու համար հանքահանի
ծանր աշխատանք է պահանջւում։ Խնչպէս հան-
քահորը մտած մշակը մենակ զարկ-զարկի
լետեկից քանդում է հողը և մաքրում իրան
հարկաւոր հանքը, այնպէս էլ խուլ անկիւննե-
րում, անծայր զաշտերում, նեխուած նաշիճ-
ներում ու անանցանէլի անտառներում ըն-
կած մենակ մշակները ծանր ու յամառ աշ-
խատանքով տարեցարի զարթեցնում են ժո-
ղովրդի միտքը իր դարաւոր ընից, քաշում են
ժողովրդի հողին դէպի բարին ու նշմարիտը,
մաքրում, ազնուացնում են իրանց շուրջն ապ-
րող մարդկանց բարք երլ։ Այս, երկելի,
սուրբ, բարդ և անչափ ծանր մի զործ է դաւ-

Շատ անդամ, ինչպէս խեղղիչ հորում ե-
ղած ժամանակ՝ կոկծելու չափ ցանկութիւն
ևս զգում գէթ մի անգամ թարմ օդ շնչելու,

Հոգիդ ձգտում է դէպ արեի լոյսը, սիրարդ կարօտում է, թախծի մէջ ընկնում, ուժեղ, աշխոյժ ձեռքերդ թուլանում են: Եւ այդ օրհասական բոպէին ուզում ես օգնութեան կանչել, ծայն տալ, պատասխան ստանալ: Եւ երբ անսպասելի կերպով մի եղբայրական յուսագրող ծայն ես լսում՝ հոգիդ թեթեանում է, հանգստանում:

Սնկասկած, ժողովրդի լուսաւորութեան դաշտում աշխատող ամեն մի անձնուրաց մշակ, որքան էլ տարուած լինի իր գործին, սրտով նուիրուած լինի նրան, կունենայ յուսահատութեան բոպէներ՝ երբ ճնշող մենակութիւն կրզայ, երբ ծարաւիի նման եղբայրական խրախուսանքի կը տենչայ: Եւ երբ այդ ժամանակ նա մի ծայն կը լսէ՝

— Մի՛ յուսահատիր, մենակ չե՞ս, քեզ նրան հազարաւոր մարդիկ կան, որոնց սիրարքո սրտի հետ է բարախում, որոնք քեզ եղբայրական ողջոյն են ուղարկում:

Եթէ ժողովրդի լուսաւորութեան ու ազատութեան գործին նուիրուած աշխատաւորն այդպիսի մի ծայն լսէ, նրա հոգեկան ոյժերը կը վերականգնեն, եռանդը կը վերանորոգուի և ծանր աշխատանքներն ու արգելքները նրան կրկին թեթև կը թուան:

Ահա մենք էլ մեր ոյժը ներածին չսփ ուղում ենք խաւարի դէմ մարտնչողների, լուսաւորութեան այդ ազնիւ աշխատաւորների նշմարիտ բարեկամը լինել, օգնել նրանց մեր թանկաղին, տանջուած հայրենիքը կենդանացնելու և խաւարի սարկութիւնից ազատելու սուրբ գործում:

Ուզում ենք ասել մեր խելքը կտրածը, ուղում ենք կոչ անել դէպի տոկուն, կատաղի կոխիւ ամէն տեսակ չարիքի և անարդարութեան դէմ, ուզում ենք խրախուսական խօսք ասել յոգնածներին, արդարութեան համար ընկածներին, ուզում ենք արդար, բարի, խելացի, նշմարիտ — քրիստոնէական կեանքի պատգամաբեր լինել:

Աշխարհը մէծ է ու լայն, — նրա տարածութիւնը հսկայական է: Նա ունի հազարաւոր լայն ու խորունկ գետեր, հազարաւոր բարձր ու խորսա լեռներ և գետնի տակ թաղուած անթիւ գանձեր... Եւ այդ բոլորից յետոյ շատ ժողովուրդներ աղքատ ու խեղճ են, գառը գանգատներ են անում իրանց վիճակից:

Մեր ժողովուրդը կեանքի գժուար, ծանր գպրոցում է կրթուել: Նա ոչ թէ իր հոգու բնական գեղեցիկ յատկութիւններն է զարգացրել այլ՝ ճնշող պայմանների շնորհիւ գա-

բերի ընթացքում ամեն տեսակ սառըութիւն ու կեղտ է մտցրել իր հոգու մէջ: Մեր առաջը՝ կատարելու շատ ծանր աշխատանք կայ: Նատ շանափրութիւն, եռանդ, զիտութիւն և մարի ու սրտի ոյժ է պահանջում:

Դէ՛հ, եկէ՛ք ամենքս էլ ում համար թանկ է հայրենիքի լուսաւոր ապագան, եղբայրական ձեռք մէկնենք իրար, միանանք, կողք — կողքի, ուսուսուի տանք և առաջ դնանք ճրշմարտութեան ու արդարութեան հեռաւոր բայց լուսաւոր ճանապարհով և մեր յետեից տանենք մեր կրտսեր եղբայրերին, տղիտութեան ու յուսահատութեան զոհերին:

— Դէ՛հ, ճանապարհ ընկնենք, Աստուած մեղ հետ:

ԱՄՕԹԱԼԻ ՓՈՔՐՈԳՈՒԹԻՒՆ

Ինչպէս չուրն ու կրակը, այնպէս էլ չարն ու բարին չեն կարող միասին ապեկ: Դրանցից ամեն մէկն աշխատում է միւսին ոչնչացնել:

Բարին շանք է դնում նշմարիտ, սրտալի խօսքով մարդկանց խելքի բերել, դարթեցնելով

նրանց քնած խիղճը և անծնական օրինակով ամրացնել նրա թողլ կամքը:

Զարն ընդհակառակը, ձգտում է խեղդելու ամեն մի բարի ձեռնարկութիւն, ամեն մի գովելի միտք. միջոցների մէջ նա ոչ մի խարութիւն չի դնում, որտեղ կարելի է, ուղղակի ոյժով է զործում, որտեղ անկարելի է ոյժով բան անել, զործ է դնում խորամանկութիւն, ծալբայեղ դէպքում նա բաւականանում է կեղոստ բամբասանքով, վիրաւորական հանաբով, նենգամիտ ծաղրով:

Մարդկային կեանքի ուղին ծածկուել է խիտ և սուր փշերով: Անարդարութիւնը, անօրինութիւնը և ամեն տեսակ սանձարձակութիւն խիտ, անանցանելի անտառի նման կանդնած են մեր ճանապարհին և արգելում են մեր ընթացքը դէպի արգարութեան, սէր և նշմարտութեան — դէպի Աստուածոյ արքայութիւնը երկրիս վրայ:

Պէտք է որ մէկը այդ խիտ անտառում ճանապարհ բաց անէ և մաքրէ ծակող փշերը — իսկ այդ առանց աշխատանքի վէրքեր ստանալու չի կարելի գլուխ բերել: Սարը բարձրանալը միշտ զժուար ու յոդնեցուցիչ է, բայց դրա փոխարէն որպիսի հրաշալի պատկերներ են յայտնալում առաջդ, որպիսի լայն հորի-

զոններ ես տեսնում, լեռան կատարին ի՞նչպիսի
մաքուր և կաղդուրիչ օդ ես ծծում, որքան
ազատ ես շնչում:

Մեր կեանքը աստուածալին արզարութեան
կատարը բարձրացնելու ժանր ու տաժանելի
աշխատանքից խոյս տալը ամօթ և մեղք է:
Հարստանալու համար մարդիկ տասնեակ օրեր
ճանապարհորդում են չոր, ամալի անապատ-
ներում, անցնում են փոթորկալից, երկիւղալի
ծովեր, լեռնային շղթաներ, սարսափելի ան-
դունդներ: Օրական հայ ճարելու համար մար-
դիկ ովկիանոսների յատակն են խորասուզում
մարգարիտ որսալու, անմտաչելի ժայռերն են
մազցում՝ թռչունների թանկագին փետուրներ
ծեռք բերելու, մրկների նման գետնի խորքերն
են մտնում և փոր փորում՝ զանազան մետաղ-
ներ ու քարածուխ հանելու համար:

Բայց միթէ ճշմարտութեան ոսկին և եղ-
բայրական սիրոյ մարգարիտը համապատաս-
խան աշխատանքի արժանի չե՞ն:

Եթէ մենք, իրաւի, ուզում ենք զլուխ բե-
րել մեր մերծաւորների իսկական բարօրու-
թիւնը, ուզում ենք նրանց համար լաւ ապա-
գայ ստեղծել՝ սմենից առաջ մեր և առհասա-
րակ բոլորի ոյժերն ուղղենք դէպի արդարու-
թիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն:

Նատ յանախ մենք պատրաստ ենք լինում
անձնուիրաբար աշխատելու արդարութեան
գործի օգտին, առանց սեփական շահի մասին
մտածելու, աւլիս ենք թէ մեր ոյժերը, թէ
ժամանակը, թէ չանքերը. սակայն, միենոյն
ժամանակ և կարիք ենք զգում՝ որ մեզ հա-
մակրեն, սիրու տան: Եւ երբ ոչ ոք չի ուզում
մեզ օգնութեան ձեռք մեկնել, այլ ամենքը
ժաղըում, արհամարում են մեր արտօն բարի
գործը, զատարկ, անպէտը ու անծիտ ձեռնար-
կութիւն են համարում նրան, երբ մեզ վրայ
բարեր են շպրտում — մեր ձեռքերը թուլա-
նում են և աշխատելու եռանզը կորչում: Ալդ
ամօթալի, մեղագործ, յանցաւոր փոքրոգու-
թիւն է: Մենք մոռանում ենք Յիսուս Քրիս-
տոսի, նրա առաքեալների, հին քրիստոնէա-
կան մարտիրոսների և գաղափարի այն մշակ-
ների օրինակը, որոնց շնորհիւ արդարութեան
սերմը աճել և բազմացել է մարդկանց մէջ:

Հիւանդը գեղ ուզում է ընդունել՝ թէ
ոչ դովում է բժշկին, թէ հայհոյում. ուրախ
ծպիթանվ է զիմաւորում նրան, թէ չարացած՝
երեսն է զարծնում — բժիշկն այնուամենայնիւ
հիւանդին չի թողնում և միայն այն բանի
մասին է մտածում, թէ ի՞նչպէս օգնէ նրան,

ի՞նչպէս վերադարձնէ կորած ոչմերը, ի՞նչպէս
նրան ոտքի կանգնեցնէ:

Այդպիսի բժիշկ եղիր քո թող եղբալրների
հոգու համար:

Երբ մենք քաղցած ենք լինում և կերակու-
րը վերցնում ենք ուտելու՝ բոլորովին ուշա-
գրութիւն չենք դարձնում՝ թէ այդ արգեօք
ուրիշները համակրնում են, թէ պախարակում:
Նոյնը պէտք է լինի նաև Սատուծոյ դորձի
վրայ աշխատելիս:

Հին քրիստոնեաներին ծաղրում, խելազար
էին համարում, ուզում էին բանտերով, տան-
չանքներով ու զիխատումներով յետ կանգնեց-
նել նոր հաւատից — բայց նրանք հաստատ
մնացին իրանց հաւատի մէջ, հաստատ պա-
հեցին իրանց հայեացքները կեանքի վրայ և կրած
տանչանքներով ու հալածանքներով նոյնիսկ
թշնամիների մէջ յարգանք զարթեցրին գէպի
քրիստոնէութիւնը:

Ուրեմն քրիստոնէութիւնը դատարկ սնա-
պաշտութիւն չէ, մտածում էին կռապաշտ-
ները, քանի որ նրա համար մարդիկ այսպիսի
յօժարութեամբ զոհում են իրանց կեանքը, ու-
րեմն այդ հաւատի մէջ մի բան կայ, որը ա-
ւելի թանկ է քան կեանքը, ալդպիսով քրիս-

տոնեաների մէջ բարձր յարգանք է զարթեց-
նում դէպի Յիսուսի վարդապետութիւնը:

Ուրեմն քո գաղափարը, միտքը, համոզմունքը
ուրիշներին յարգել տալու համար՝ ամենից առաջ
պէտք է ինքոդ յարգես և պատրաստ լինիս այդ
բանը հաստատելու կեանքդ զոհ բերելով նրան:

Սրանից մի քանի տարի առաջ Շուիցարիայի
մի զիւղը եկան մի քանի քարոզիչներ: Նրանք
լսել էին, որ այդ զիւղը շրջապատուած լինելով
բաղմաթիւ գործարաններով փչացած ու անբա-
րոյական է: Հարբեցողութիւնը, պոռնկութիւ-
նը, հայուսանքը, անաստուածութիւնը, մշտա-
կան կոփւները, սպանութիւնները այդ զիւղը մի
փոքրիկ Սողոմ կամ Գոմոր էին զարձրել:

Առաջին շաբաթ օրը, երբ բանւորներն սատ-
ցան աշխատավարձր, արիւն - քրտինքով
ծեռք բերած կոպէկները, իսկոյն և եթ վա-
զեցին գինեաները. կին և տղամարդ հարբած,
խառնուել էին իրար: Այդ ժամանակ ներս
մտան քարոզիչները. —

— Եղբալրներ, քոյրեր, ասում էին քարո-
զիչները, խելքի՝ եկէք, Աստծուց վախեցէք,
խղճացէք ծեր կանանց ու երեխաներին: Տանը
ծեղ սպասում են քաղցած ցրտից սառած ծեր
ընտանիքները, իսկ զուք այստեղ ծեր վերջին
կոպէկները խմիչքի էք տալիս: Ամբողջ շաբա-

Թը մրկ ու փոշու մէջ աշխատել էք, քրտինք
թափել միթէ նրա համար, որ դաք այստեղ
արազի թունով թունաւորուիք, կորցնէք ծեր
դատողութիւնը, խելքը, անասուն դառնաք,
միթէ նրա համար, որ տուն գնաք ինչպէս
վայրենի գաղաններ և ուրախութեան, քէֆի
փոխարէն ծեր երեխաններին ծեծ, հայհոյանք,
ցաւ ու արտասուք տանէք: Զէ՞ որ դուք
մարդ էք, Աստուծով ստեղծուածն էք:

Սիդ խօսքերին բանւորները չը հաւանեցին:
Դէպի արդարութիւնը, մաքուր կեանքն արած
կոչը նրանք ծաղրով, հայհոյանքով սպառնա-
լիքով ընդունեցին: Քարողիչներն առաջին ան-
յաջողութիւններից չը լուսահատուեցին: Ամ-
բողջ շարաթը տնկտուն էին ման գալիս, խօ-
սում էին աշխատանքի չը գնացած կանանց,
երեխանների հետ, իսկ շարաթ օրը նորից սկսե-
ցին իրենց արշաւանքը ամուսինների ու հայ-
րերի դէմ: Բարկացած բանւորները հայհոյան-
քից ծեծի անցան և քարողիչներին լաւ թա-
կելով՝ զիւղից գուրս գցեցին: Սրանք անտրը-
տունց հպատակուեցին, սակայն հետեւալ շա-
բաթ դարձեալ այդ զիւղն էին և դարձեալ
սկսեցին իրանց դորձը, աշխատեցին խելքի բե-
րել գուշիկ, տգէտ բանւորին:

Հարբած բանւորները կատաղութիւնից կրակ



կարուեցին, սարսափելի անէժքներով վրաց
թափուեցին, արդարութեան ըարդղիչներին
անշնչացնելու չափ ծեծեցին և վերջապէս, այդ-
քանով էլ չբաւականանալով բռնեցին գլխաւոր
քարողին և Քրիստոսի նման խաչը հանեցին,
այն Քրիստոսի, որի մասին նա այնքան խօ-
սում էր. և այդպէս խաչի վրայ մեխած՝
անբարոյական երգերով նրան պատեցրին զիւ-
ղի փողոցներում և վերջապէս զիւղից դուրս
տարան և գցեցին աղբակոյտի մէջ:

Հետեւեալ առաւտօտ, հարբածութիւնից ուշ-
քի գալով՝ նրանք սարսափով հասկացան՝ թէ Հ
ինչ խիստ պատիժ է սպասում իրանց՝ մար-
դապասպանութեան համար: Նրանց կարծիքով
ծանր պատիժն անխուսափելի էր: Բայց այդ-
պէս չեղաւ: Ծեծուած, շարդուած քարողիչ-
ները քիչ կազդուրուեցին թէ չէ՝ կրկին իշան
իրանց տանշողների մօտ և կրկին սկսեցին չե-
զութեամբ ու սիրով խօսել մոռացուած Աս-
տուծոյ, հայհոյանքի ենթարկուած արդարու-
թեան մասին: Սէրը չարութիւնից ուժեղ հան-
գիսացաւ: Բանւորներն անկարող եղան դիմա-
նալ ճշմարտութեան ոլժին, արտասուելով
շրջապատեցին նրանց, որոնց մի քանի օր ա-
ռաջ արտասուել էին տալիս. համբուրում էին
նրանց ձեռքերը, ոտքերը, աղաչում էին, որ

ներեն. Երդում արին, որ նոր կեսնք կը սկսէն. խնդրեցին, որ քարոզիչներն իրանց մօտ մնան:

Երկու տարի յետոյ այդ դիւզը անժանաշելի դարձաւ. դժողով զրախտ գարձաւ: Բնակիչների արդարութիւնը, ընտանեկան խաղաղութիւնը, նիւթապէս ապահովուիլը — ամբողջ դաւառում օրինակելի եղաւ:

Փչացած բանւորների կեանքում յառաջացած այլքան փոփոխութիւնն, իշարկէ, ոչ թէ կախուած էր նրանց մօտ եկած լարոզիչների թուից, այլ այդ քարոզիչների հոգեկան արժանիքներից, եռանդից, անխորտակելի սիրուց զէպի կորած եղբայրները, խորը համոզմունքից և այն հաստատուն հաւատից, որ բարին վերշիվը կը յաղթէ չարին, որ ճշմարտութիւնը կը յաղթէ սառւթեանը:

Իրաւի, չարիքը այնքան զօրեղ է, այնքան տիրաբար է իշխում աշխարհի վրայ ոչ թէ այն պատճառով, որ իսկապէս ուժեղ է, անյաղթելի է, այլ այն պատճառով, որ մենք թուլութեամբ ենք կուռւմ նրա դէմ, որ առաջին իսկ զիմարդութիւնից փողբոզութեամբ թողնում ենք սկսած բարի զործը, կողքի ենք քաշւում և թողնում, որ կետնքն իր նախկին ախուր ուղիով ընթանայ:

Մրգան յանախ է պատահում, որ լիմար ծաղ-

րանքը սառեցնում է մեր եռանդը և հիմքում խեղում բարի սկզբնաւորութիւնը: Եւ մեր մէջ մարդիկ առհասարակ ծաղրում են ամեն ինչ — թէ՛ մարդու կրօնասիրութիւնը, թէ՛ անբարոյական կեանքից յետ կանգնել և մաքուր կեանք սկսելը, հարբեցողութիւն թողնելը, ընդհանուրի օգտին բարի գործ կատարելը — այդ բոլորի վրայ մարդիկ այժմ ծիծաղում են: Մի մարդ շատ ուղիղ է տաել, որ մենք այն պատճառով ենք ստիպուած լինում շատ անդամ արտասուել, որ շատ յան ծիծաղում ենք:

Եւ տիրալին այն չէ, որ յաճախ շուրջդ լիմար ծաղր ես լսում, այլ այն է, որ շատերը նրանից փախենում են, թագնում են, կարծես իրանց արած բարի գործից ամաչում են, ամաչում են ազնիւ մտքերից, լուսաւոր գաղափարներից: Նատերը ուրուականներից ու տեսիլքներից չեն փախենում — իմանալով, որ այդ սուտ բան է, հիւանդ երկակայութեան արդիւնք է, շատերը պատերազմի գաշտում քաջաբար կանգնում են թշնամու գնդակների առաջ, համարձակութեամբ լայտնում են նրշմարտութիւնը — բայց վախենում են ծաղրից, ամբոխի ծուռ հայեացըից: Ինչպէս կըակից

շիոթւում են շրջապատողների աննպաստ կարծիքից:

Մի անդիխացի զրոյ պատմում է հետեւալ գէպը. — փչացած զինւորների մէջ պատահմածը մի աստուածապաշտ, կրօնասէր ու արդար զինւոր կար. նա սովորութիւն ունէր ամեն գիշեր քնելուց առաջ աղօթել. ընկերները սկսեցին նրան ծաղրի ենթարկել, «ճգնաւոր», «տիրացու» անուանել: Նա ամաչեց, ընկերների ծաղրից վախեցաւ և սկսեց ծածուկ աղօթել: Ծածուկ աղօթելն էլ շատ անգամ չէր յաջողում և նա քիչ քիչ մոռացաւ իր գովելի սովորութիւնը: Մի ձեր զին որ, որ այդ բոլորին ականատես էր եղել, մի անգամ առանձին խօսեց փոքրոցի երիտասարդի հետ:

— Ես չեմ աղօթում, որովհետեւ փչացել եմ, ասաց նա, բայց դու, որ այդպիսի լաւ սովորութիւն ունէիր, այժմ ընկերներիդ ծաղրից վախեցած՝ չպէտք է թողնես աղօթքդ: Միթէ կարող ես պատերազմի ժամանակ զլուխդ գնդակներից թաղցնել — մի աղօթիր, բոլորս էլ կը տեսնենք, որ դու էլ մեղ պէս փչացել ես, բայց եթէ աղօթում ես, մեր ծաղրից չըպէտք է վախենաս:

Զինորը սիրա առաւ. նորից սկսեց յախնի

կերպով աղօթել: Ընկերներն էլ նորից սկսեցին նրան ծաղրի ենթարկել, բայց նա այդ բանի վրայ ուշազրութիւն չդարձրեց. ծաղրողները քիչ-քիչ լուեցին և վերչապէս մի բանիսն էլ սկսեցին նրա օրինակին հետեւել և երեկոներին աղօթել: Դրանց թիւը քանի գնաց շատացաւ, և վերչապէս զինւորների մեջ մասը աղօթազրբեր ձեռք բերեց և սկսեց կարդալ: Այսուհետեւ նրանց կեանը շատ փոփոխութիւնների ենթարկուեց: «Մի կտոր թթխմորը թթուեցնում է ամբողջ խմորը» ասում է առաքեալներից մէկը, իսկ աղը, եթէ կորցրել է իր յատկութիւնը՝ բանակով որքան էլ շատ լինի — ոչ մի զին չունի և արդէն անպէտք է ամենքի համար:

Ընթերցո՞ղ, ի՞նչ կլինենք մենք մեզ շրջապատող կեանքում. — բարութեան թթխմո՞ր, թէ ոյժը կորցրած, անպէտքայած աղ: Կը զնանք մարդկանց մէջ Քրիստոսի հետ և նրա հետ էլ կը կրենք և՛ ծաղր և՛ հալցոյանք և՛ վիշտ՝ թէ մարդկային անարդարութեան և անառակութեան հետ միացած՝ կը ծիծաղենք աւետարանական խօսքի վրայ, ոչինչ կը համարենք Փրկչի սկսած դորձը:

Երկու ճանապարհ կայ մեր առողջը. — թէ դրանցից ո՞րն է լաւ՝ ինքներդ ընտրեցէք:

ԳՐՔԻ ՍՊՎԸ

Սրանից մի քանի տարի առաջ Ռուսաստանի մի քանի նահանգներում սով էր: Ես վճռեցի գնալ այդ նահանգները, անձամբ տեսնելու ժողովրդի կարիքը և նրա չափը: Սովի մատնուած մի նահանգական քաղաքում ես դիմեցի նահանդապետին. —

— Ասացէք խնդրեմ, ո՞ր գաւառը գնամ, որ կարողանամ պարզ հասկացողութիւն կազմել սովի տուած աւերածների ու վնասների մասին.

Նահանգապետը մատնացոյց արեց ամենքից խիստ սովի ենթարկուած մի գաւառ, և ես ճանապարհ ընկայ: Բայց վերջինիս վատութեան պատճառով այնքան ուշացավ, որ այլևս անկարող եղավ նահանգապետի ցոյց տուած գաւառը դնալ: Ուստի վճռեցի հենց առաջին գաւառում կանգ առնել և քննել ժողովրդի դրութիւնը: Այդպէս էլ արի:

Մի գաւառում եմ, որտեղ ըստ պաշտօնական տեղեկութիւնների սովոր այնքան էլ խիստ չէ: Մատայ մի գիւղ, որ վեց ամիս է սովի է մատնուած: Պատահում եմ մի գիւղացու: Ա.մ. Հողականացու կարկատաններից է կցուած:

Երեսը դալկացած է ու կնճիռներով՝ ծածկուած: Աչքերը մի ինչ-որ գաղտնի, խորը թախիծ են արտայալում: Ուսին դցած է մի տոպրակ, ներս ընկած կուրծքը գժուարութեամբ է չնշում և ժանր հեռում է: Ա.մ. Հողականացուածը անելանելի կարիքի ու երկար սովորութեան ժանր գրոշմն է կրում:

— Ափու, ուր ես գնում:

— Տուն: Տէրտէրի մօտ էի գնացել ալիւր խնդրելու: Աստուած կարգը հաստատ պահէ մի փութ ալիւր տուեց, տանն արդէն մի շաբաթ է կրակ չենք վառում, երկրորդ օրն է՝ հացի կտոր չենք տեսել: Սովից պէտք է մեռնեինք:

— Ինչու է քեզ ալգպիսի գժբաղդութիւն պատահչել.

Ինչ ես ասում, պարո՞ն, խօմ մենակ ինձ չէ, ամբողջ գիւղն առանց հացի է մնացել: Միայն Տէր-Դրիգորն է, որ մեզ պահում է, նա էլ չըլինէր, բոլորս կը մեռնէինք: Ինչ որ ունէր բաժանեց, հիմա ինքն էլ չդիտէ, թէ գարնան ի՞նչ ուտէ, ի՞նչ ցանէ,

Երկու վերստ անցնելուց յետոյ՝ մի պատկեր տեսայ, որ երբէք չեմ մոռանալու: Տասը տընուոր մի փոքրիկ գիւղ է առաջիս: Խրճիթները կիսաքանդ: Ներսը դատարկ, ալստեղ-

այնտեղ պատերի մօտ սախտակի կոպիտ նըստարանները: Տղամարդիկ բոլորը օտար երկիր աշխատանքի են զնացել, երեխանները՝ ուռած փորերով, դալուկ դէմքերով: Կանալը՝ ապուշի նման, գլուխները քաշ արել, կանգնած տեղերում մնացել են: Երեւում է, որ գժբաղութիւնը վերջին ժայրն է հասել, աչքերում արտասունքն է չորացել, սրտերում յուսոյ ոչ մի նշոյլ չի մնացել:

— Ել սրանից աւելի ի՞նչ դժբաղութիւն կարող է լինել, մտածում էի ինքս ինձ: Ել ինչու էին ինձ ուրիշ գաւառ ուղարկում իսկական սովոր աեսնելու, քանի որ այստեղ, քաղաքից երկու ժամ հեռաւորութեան վրայ ամբողչ զիւղեր են հալւում, ինչպէս որ գարնան վերջ հալւում է ձեան վերջին մնացորդը: Այս թիւրիմացութիւնն ի՞նչպէս բացատրել, միթէ ոստիկանութիւնը, կառավարութիւնը չպիտի այս բանը: Քաղաք դառնալով խօսեցի դրա մասին:

— Իդուր էիք յուղուում, հանգստացնում էին ինձ ոստիկանատանը: Դեռ թարմ, նոր մարդ էք, օտար տեղից էք եկել, այդ պատճառով է այլքան ազդել ծեղ վրայ: Խսկ մենք արդէն ընտելացել ենք: Հաւատացէք, որ մենք էլ սիրառնենք, բայց արդէն սովորել ենք ժողովրդի

զժբաղդութեանը, որ այժմ մեղ վրայ չի աղդում: Երբ հիւանդը աչքերիդ առաջ աստիճանաբար է հալում - մաշլում, ոչինչ չէք նկատում, բայց երբ երկար բացակայութիւնից յետոյ էք տեսնում նրան, այն ժամանակ արդէն աչքի է ընկնում նրա հիւծուելը, և դուք համոզում էք, որ նա դէպի մահն է դիմում:

Դրանք թէե ճշմարիտ, բայց սիրա կտրատող խօսքեր էին: Ով զիւղին մօտ է ապրում, նա արդէն ընտելացել է նրա չքաւորութեանն ու տգիտութեանը, այլևս չի զգում դժբաղդութեան ամրոջ զառնութիւնը: Խսկ ով զիւղից հեռու է ապրում, նա արդէն սարսափով է տեսնում այդ թշուառ կացութիւնը:

Գիւղը այդ տեսակի մարդկանց յահախուղղակի յուսահատութեան է հասցնում:

Մտածեցէ՞ք, օրինակ, հետեւալ դէպքի մասին: Մի ուսումնական մարդ քաղաքից զիւղ է գնում ամառանոց: Դէպքի բերմունքով, նա սկսում է զրոյց անել զիւղացի մի երիտասարդի հետ:

— Դու զբագէտ ես, կարդալ դիտե՞ս, հարցնում է երիտասարդին:

— Ես ի՞նչ իմանամ, զիւղէմ թէ չէ. մի քիչ մտածելուց յետոյ պատասխանում է երիտասարդը:

Ի՞նչպէս, միթէ չես իմանում, ինքդ կարդալ գիտե՞ս թէ չէ: Ուսումնարանում չես սովորել, խոժ այդ կը գիտենաս:

— Ուսումնարանում եղել եմ, լաւ էլ կարդալ գիտէի մի ժամանակ, բայց արդէն չորս տարի է անցել, և ձեռքս մի թղթի կտոր չեմ առել: Հիմա ինքս էլ չեմ իմանում՝ գիտե՞մ կարդալ, թէ մոռացել եմ:

— Իսկ ինչու այս չորս տարում ոչինչ չես կարդացել:

— Եատ էի ուղում կարդալ, բայց զիրք չկար, հէմա էլ չեմ ուղում:

Ահա ուրեմն, անանցանելի անտառում լուսոյ մի ճառագայթ է երկացել, բայց կարճ ժամանակից յետոյ անհետացել է: Իսկ որբան ալդպիսի երիտասարդներ կան զիւղերում, ուրո՞ւ հոգեպէս խեղդուում, կորչում են:

Գրքի պակասութիւնն զգում են ոչ միայն զիւղի երիտասարդները, այլև զիւղական բահանան, ուսուցիչն անդամ: Ճրադր վառում է և պայծառ լոյս տալիս այնքան ժամանակ, որքան նրա մէջ իւղ կալ, և երբ նորից ու նորից իւղ չաւելացնենք՝ աստիճանաբար կը խաւարի և վերջապէս՝ բոլորովին կը հանդի:

Ի՞նչ անենք, ի՞նչպէս օդնենք, ի՞նչպէս վերացնենք զրքի սովոր, որ տանչում է զիւղա-

ցիներին: Իրանք տեղացիք սովորել են այդ սովին: Ճիշտ որ մենք նման ենք ցրտի տակ սառչող Ճանապարհորդին. — սկզբում նա աշխատում է տաքանալ, բայց հետղհետէ ցուրտը նրան յաղթում է, կապտեցնում, թմրեցնում և վերջապէս՝ յաւիտեանս քնացնում: Սուչելուց ազատելու համար ճանապարհորդին ցրնցում են, շարժում, աշխատում են արեան ընթացքն արագացնել, տաքացնել: Այդպէս էլ պէտք է ցնցել հոգեպէս սառած զիւղական երիտասարդներին, որոնք եղել են ուսումնարանում և որևէ բան սովորել են: Դողրոցի միջոցով զարթնած ժողովրդի միտքը շարունակ պէտքէ աշխատեցնել, զիրք մատակարարելով:

Առանձին անհատներին կարելի է այդ բանը լը յաջողուի, ոյժերից բարձր լինի, ուստի հասարկութիւնը ինքը պէտքէ ձեռք առնէ այդ գործը:

Անբերիութեան մեռցնող հետևանքների դէմ կոռւելու համար զիւղերում հասարակական շտեմարաններ են շինում, հացահատիկ են հաւաքում: Անհրաժեշտ է նոյն տեսակ հասարակական շտեմարաններ կառուցանել նուե մտաւոր պաշարի համար, հարկաւոր է ընթերցարաններ, դրագարաններ հիմնել:

Գործը դժուար է: Ակզբում մի տասը —
տասն և հինգ րուբլին բաւական է: Այնուհետեւ
գիրքն ինքը իր համար ճանապարհ կը
բանալ: Նա այնքան լոյս կը տարածէ, այն-
քան օգտակար բան կը սովորեցնէ, որ իր
վրայ արած ծախսը տոկոսներով կը վերա-
գրածնէ:

Խելացի գիրքը պտղատու ծառ է: Նա աշ-
խատանք և ծախս է պահանջում միայն արն-
կելու ժամանակ: Իսկ երբ կը լունի, կը կանա-
չի, այնուհետեւ իր պտղալներով տասնապա-
տիկ կը վարձադրէ աիր ոչը: Ուստի, քահանան,
ուսուցիչը, առհասարակ ամեն մի գիտակցող
մարդ, ինչ պաշտօնի էլ որ լինի, թող այդ
ցաւի մասին ծածածէ, թող օգնութեան հասնի
գրքի սովոր վերացնելու համար:

Քարոզեցէք, որ գրքի շահմարաններ ունե-
նան, պաշար հաւաքեն, ծղեցէք ժողովրդի մէջ
իմաստութեան, գիտութեան, ճշմարտութեան,
բարութեան ու արդարութեան սերմերը
ժամանակ կը դալ, որ հոգեկան սովոր
տեղի կտայ առատ հունձին:

ՅՈՒՆՉԸ ԱՌԱՏ Է

Մի անդամ գիւղ էի գնում. — սովորական
հասարակ ղիւղ էր: Անծալը չքաւորութիւն,
ծանր աշխատանք, մարի և սրտի խաւար,
մշտական հարբեցողութիւն: Օրը կիրակի էր.
սրտի ցաւով էի տեսնում՝ թէ ինչպէս գիւղա-
ցիք թափառում են փողոցներում և չղիտեն:
թէ ի՞նչ անեն: Ինձ մօտ կանչեցի մի քանի
հոգի և ասացի, որ պատրաստ եմ նրանց հա-
մար Սւետարան կարգալու, եթէ ուզում են
լսել: Կարգացի Յիսուսի չարչարանքների նկա-
րագրութիւնը և յետով երկար զրոյց ունեցանք
այն բանի մասին, թէ մարդը որպիսի կատա-
ղութեան հասնելու ընդունակ է, թէ նա կա-
րող է գաղան դառնալ, ոչ խիզճ կը մնայ
նրա մէջ, ոչ ամօթ, թէ նա ոչ մի չարութեան
առաջ չի կանգ առնի: Սւետարանից մեր խօս-
քըն առօրեայ կեանքին անցաւ, մեր սեփական
վարմունքներին:

— Եհ, խօսեց մի գիւղացի, մենք էլ Քրիս-
տոսին չարչարողներից շատ հեռու չենք զնա-
ցել, նրանցից շատ էլ լաւ չենք: Մենք էլ մեր
արածը չենք հասկանում: Տեսնում էք որքան
սրտառուչ է պատմուած, թէ ինչպէս Քրիս-

առս նախօրօք պատրաստւում էր իր չարչարանքին ու մահուանը: Իսկ մենք ի՞նչ ենք անում, նոյնիսկ նրա չարչարանքի շաբթին՝ հարթում, ուտում - խմում, տողեցնում ենք փորերս: Երազը վեզրօներով ենք կոնժում: Աստուծոյ Որդին իր արիւնք կաթ - կաթ հոսեցնում է մեղ համար, իսկ մենք քէփով ու խնջովով չաղանում, արիւններս ենք շատացնում: Այս, այսօր լսեցինք Աստուծոյ խօսքը և հիմա ամենքս ել ամաչում ենք: Լսեցինք՝ որ Քրիստոս ասել է իր աշակերտներին՝ «Խաղաղութիւն ձեզ, ընդունեցէք Սուրբ Հոգին»: բայց մի՛թէ մենք կարող ենք ասել, որ մեր մէջ Աստուծոյ խաղաղութիւնն է տիրում, մի՛թէ նրա չորհը կալ մեղ վերալ.

Այսպէս խօսեցինք մինչեւ երեկոյ: Երեկոյան դարձեալ եկան նոյն մարդիկ և չետները մի տասր հոգի ուրիշ զիւղացիներ կը բերին: Խրճիթն ամբողջապէս լցուեց: Նորից կարդացինք, նորից խօսեցինք ժողովրդի տղիտութեան մասին: Յետոյ ես մի դրբոյկ կարդացի, որոնք բացարում էր՝ թէ հարբեցողութիւնը ո՞րքան վնասակար է մարդուն:

— Այս, ճիշտ որ մեր իսկական բարեկամն ես, ասում էին ինձ զիւղացիք: Եթէ մեղ հետ շուտ - շուտ ալդպիսի բաների մասին խօսող

լինէր, մենք աւելի քիչ կը հարբէինք: Է՛հ, կորած ենք, խաւար մարդիկ ենք: Ո՞վ է մեղ սովորեցրել, ո՞ւ մնից խելօք բաներ լսենք: Ժանրը է, ծանր մեր կեանքը, զանգատւում էին զիւղիք:

Նրանք տուն գնացին ուշ զիշերին: Ճետեւ եալ առաւոս վաղ ուրիշ զիւղացիներ եկան և պատմեցին, որ ինչպէս լսել են, երեկ ես լու լաւ բաներ եմ կարդացել: Խոնդրեցին, որ իրանց համար ել կարդամ:

Այսպէս ամեն օր մի քանի անգամ զիւղացիք գալիս էին ինձ մօտ կարդացածս լսելու: Յետոյ սկսեցին զալ նաև կանալք: Ես ի՞նչպէս կարող էի նրանց մերժել. քանի որ ուզում էին ինձնից Աստուծոյ խօսքը լսել:

Շատ անգամ զիւղի փողոցներից անցնելիս պատահում էի կանանց: Նրանք ինձ խորը բարեւում էին և շնորհակալութիւն յալտնում:

— Ինչի՞ համար էք շնորհակալութիւն յալտնում, հարցը ես զարմացած:

— Բարի իրատներիդ համար, բարեկամն, միշտ մեր զիւղացիները հարբում էին, իսկ այս քանի օրս ոչ մի կաթիլ օղի բերանները չեն առել: Է՛հ, միքանի ժամանակ մեղ մօտ ապրէիր, սիրելի՞ս, քո միշոցով մենք էլ կը լուսաւորուէինք:

Ամաչում էի այն գովասանքներից, որոնց ամենեին արժանի չէի: Ի՞նչ էի արել այդ մարդկանց — մի քանի տող էի կարգացել, ուրիշ ոչինչ:

Ես գիւղից հեռացայ և մտածում էի, թէ ո՞րքան հեշտ է առաջ տանել սուրբ զործը, եղբայրներին օդնելու դործը: Ժողովրդի սրախ դուռը շատ երկար ծեծել հարկաւոր չէ — նա շուտ է բացւում: Ինչպէս որ երաշտից չորացած հողը ծարաւի է ջրի, այնպէս էլ ժողովուրդը արդարութեան խօսքին է ծարաւի: Հնձի ժամանակը հասել է, հասել է, հնձողներ են հարկաւոր:

Ի՞նչպէս օդնենք գիւղացիներին, ի՞նչպէս լուսաւորենք նրան. — մտածեցէք դրա մասին, հոգացէք: Հունձն առատ է, մշակներ են հարկաւոր!

ԵՐԿՈՒ ՕՐ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Շատ քիչ է պատահում, որ օգոստոս ամսին այնպիսի եղանակ լինի, ինչպէս այս անգամ էր: Պայծառ, առաք օրեր էին: Կարծես զգալով իր մօտալուս վախճանը, ժպտերես

ամառն իր վերջին հրամեշան էր տալիս մայր երկրին և մարդկանց իրանց խեղդուած, նեղ բնակարաններից բաց օգն էր հրաւիրում: Ես երկու ամբողջ օր աղատ էի և վճռեցի Ֆինլանդիա գնալ: Երկաթուղով ժամ ու կիսուայ ճանապարհ անցնելուց յետոյ, Ֆինլանդիայի խաղաղ, յետ ընկած անկիւններից մէկը հասալ: Կշտացած ծին ժիր վազում էր, թեթև կառքս առանց ցնցուելու, առանց աղմուկի առաջ էր սահում: Ուզին սեղանի նման հարթ էր. — ոչ մի կոշա, ոչ մի փոս, ոչ մի քար չկար:

— Ի՞նչ հիանալի ճանապարհ է, ասում եմ ես կառապանին: Չես էլ իմանում, թէ անիւններն ինչպէս են զլորւում, կարծես կանգնած են:

— Այս ում ճանապարհն է:

— Ոչ ոքի, պատասխանում է կառապանը, առ ընդհանուրինս է, հասարակութեանը: Ֆինլանդիայում ճանապարհները բոլորն այսպէս են: Ամեն մի հողատէրի որոշ տարածութիւն է տրւում, որտեղ նա պարաւոր է ճանապարհ շինել և կանոնաւոր պահել: Եթէ որևէ մէկի սահմաններում ճանապարհը վշացած լինի, տաճուտէրը հողատիրոջը մի անգամ նախազգուշացնում է, իսկ եթէ դրանից յետոյ էլ կարգի չը բերուի, ի՞նքը շինել է տալիս

և ապա հողատիրոջից վերջնում ճախսր: Բայց այդպիսի դէպք համարեա բոլորպին չի պատահում: Ամենըն էլ հասկանում էն, որ Ճանապարհը բոլորին էլ հարկաւոր է, և եթէ կողէիներ խնայելու համար լաւ ճանապարհ շինեն՝ տասնեակ բուրլիներ արժեցող ձի, եզ ու սալլ կը փչացնեն:

Յիշելով մեր գիւղական ճանապարհը, ես մտածում էի՝ «Միթէ ճիշտ որ ամենըն հասկանում էն»...

Մեզանից դէպի աչ տեսալ մի մեծ, դեղեցիկ շինութիւն: Պատերը բարձր, պատուհանները՝ լուսաւոր, շուրջը մեծ բակ:

— Այս ի՞նչ տուն է:

— Ուսումնարան է:

— Ի՞նչ ես խօսում, զարմացած հաբցը ես, սա կատարեալ պալատ է և ոչ թէ ուսումնարան, և այն էլ՝ զիւղական ուսումնարան:

— Էհ, այս գեռ ի՞նչ է, հպարատութեամբ ու քմծիմազով խօսում է կառապանս, որ ինքըն էլ ֆինլանդացի էր: Մի եօթ-ութ վերստայն կողմք նոր ուսումնարան է շինւում, մէկ այն տեսնէք՝ ի՞նչ կասէք:

Ես ցած իշայ կառըից և մտալ ուսումնարանը: Այստեղ ամեն ինչ կարգին էր ու կանոնաւոր, աշակերտների համար՝ մեծ, լուսա-

ւոր սենեակներ, ուսուցչի համար՝ գեղեցիկ բնակարան իր բոլոր լարմարութիւններով: Ուսուատանի զիւղերում ես այսպիսի բան չեմ տեսել: — Մենք ուսուցչի մասին շատ ենք հոդանում, բացատրում էին ինձ ֆինլանդացիները երբ տեսնում էին զարմանքս, — աշխատում ենք, ոչ մի կարիք չդպայ, ոչ մի նեղութիւն չը բաշի, որպէսզի ժիր, առոյգ լինի և կեանքից չը ձանձրանաբ: Զէ՞ որ ուսուցիչը զիւղական խաւարի և տղիտութեան դէմ կրուղուների առաջին շարքումն է կանգնած, առաջին հրացանաձիգն է: մեր մատաղ սերունդը նրանից պէտքէ սովորի եռանդուն և աշխոյժ լինել: Ուսուցիչը պէտք է ներշնչէ աշակերտին սիրով վերաբերութիւն դէպի աշխատանքը: Իսկ այդ բոլորը նո ի՞նչպէս կարող է անել, եթէ չբաւոր լինի, վատ պայմանների մէջ դրուած լինի, ապրուստի միջոց նսրելու համար սակալուած լինի կողմնակի աշխատանքներ ունենալ: Եւ այդպիսի ննչուած դրութեան մէջ նա կեանքին պէտք է նայէ որպէս մի ծանր բեռի, որպէս բաղցից չմեռնելու ամենավերցին մի միջոցի...

Ես լիշեցի մեր խուլ, յետ ընկած զիւղերը, նեղ, կիսաբանդ ուսումնարանները, ուսուցչի փոքրիկ խուցը, որի չորս կողմից, ծակ ու նե-

զեց զզվում է քամին; Եւ մի խղճաշարութիւն, մի տեսակ վիրաւորանք զդացի մեր այդ չափ յետամնայութեան պատճառով: Ինչ պիսի ծանր, սարսափելի պայմանների մէջ է աշխատում մեր գիւղական ուսուցիչը: Եւ արդեօք ե՞րբ պէտք է մեր գիւղական ուսուցիչըն էլ կանոնաւոր օթևան ունենալ: Շնուտ կհասնի, արդեօք, այն ժամանակի, երբ մէր գիւղերում ամենալաւ բնակարանները կլինին ոչ թէ զինեաներն ու խանութները, այլ ուսումնարաններն ու ընթերցարանները:

— Այդ դեռ ոչինչ, ասում էր ինձ իմ տանտիրուհին, որի մօտ իշեանել էի, ֆինլանդացիները դպրոցներով չեն բաւականանում. Նրանք մտալիր են գիւղական համալսարաններ հիմնել, որպէսզի յայտնի գիտնականները, ամենալաւ պրօֆեսորները ամեն տեղ ճանապարհորդեն և իրանց մասնագիտութիւնից դասախոսութիւններ կարդան:

Այս, այսուեղ շատ են աշխատում ժողովրդական դպրոցի վրայ: Իրանց սիրելի զաւակի նման խնամում են նրան և այդ պատճառով էլ ժողովուրդը խաւարի մէջ չի ապրում: Տեսէք, թէ ի՞նչպէս են մշակուած նրանց հողերը: Այսաւելի հողն անպէտք է, աւազ ու քար է, բայց ֆինլանդացին նրան պտղատու և օդ-

տակար է դարձրել: Թէկուղ աշխարհի ամենահեռաւոր ծալրում հողը պարարտացնելու և մշակելու վերաբերմամբ մի փոքրիկ զիւտ լինի՝ ֆինլանդացին խսկոյն և եթ օգտում է այդ գիւտերից: Ֆինլանդացիք բոլորն էլ գրադէտ են և լրազիր են կարդում: Եւ լրագրներն էլ զարմանալի կերպով խելօք և ժողովրդի համար օգտակար նիւթեր են տալիս: Ֆինլանդական լրագրներում գրում են ամեն ինչ, որ կատարում է աշխարհում, տօների պոթիւքարողներ են գրում, անտեսութեան վերաբերեալ խրատներ: Անձանօթ մարդը նոյնիսկ վիրաւորուում է, որ ոչնչով չի կարող զարմացնել ֆինլանդացի գիւղացուն: Մի ուսումնական ուսու իր նոր ստացած ուսուերէն լրագրում կարդացել է մի նոր գիւտի մասին և ուղեցել է ֆինլանդացի հասարակ գիւղացիներին տեղեկութիւն տալ այդ գիւտի մասին: Վերջիններս սակայն կարել են նրա խօսքը. —

— Է՛հ, պարոն, մենք արդէն դրա մասին վաղուց գիտենք:

Տօներին բոլորը եկեղեցի են գնում: Խսկ ու տունը որ եկեղեցուց հեռու է, հաւաքում են միասին մի տեղ և Աւետարան են կարգում, սաղմոսներ են երգում: Դրանից յետոյ սկսում են լրազիրներ կարդալ, խօսել առօրեալ դեպ-

բերի, իրանց մասնաւոր և հասարակական գործերի մասին: Եւ ամենքը խօսում են հանդարս, բաղաքավարի, խելօք:

Մի անգամ, Ճաշից յետով, ինձ հիւրընկալող ընտանիքի հետ սունկ հաւաքելու գնացի: Մւղանից մէկը ժամացոյցը կորցրեց: Շատ որոնեցինք, բայց չը գտանք:

— Ոչի՞նչ, հանգստացնում էր տաճտիրուհին, կը դանուի, էղուց կիրակի է, քահանային մի նախակով կիմացնեմ, եկեղեցում ամենքին կը յայտնէ և ով որ դոել է կը բերէ կը տայ:

— Մի՞թէ ուզիդ կը ասում, զարմացած և չը հաւատալով հարցրի ես:

— Անպայման: Մի քանի ժամանակ առաջ մէր ժանօթներից մէկը այստեղ դալիս իր քսակըն էր կորցրել՝ մէջը հարիւր քսան ըուրիի: Շատ ման եկանք, չը գտանք: Մի քանի օր յետով մի գիւղացի բերեց և ամբողջութեամբ յանձնեց տիրոջը:

Առհասարակ ինչքան էլ թանկաղին բան կորդի, քահանան եկեղեցում յայտնում է, և ով որ դոել է՝ անպատճառ վերագրանում է ալրոցը: Շատ անդամ էլ, երբ մէկը մի որևէ բան է գտնում, բերում քահանային է տալիս և կորցնողն էլ սրան է զիմում և ստանում: Կորուսար գտնողին ոչ մի վարձատրութիւն չէ

տրւում, որովհետեւ այդ սաստիկ վիրաւորանք է համարւում:

Սյս բոլորն այնքան նոր, այնքան անսովոր, միւնոյն ժամանակ և այնքան լաւ բան էր, որ ես աւելի ու աւելի համոզւում էի, որ մենք գեռ շատ ու շատ յետ ենք ֆինլանդացիներից և մեր առաջ գեռ ահազին գործ կալ կտարելու:

Միւնոյն ժամանակ ես տեսնում էի, թէ ինչի վրայ պէտք է աշխատենք մենք և թէ դէպի ո՞ր կողմը պէտք է դարձնենք մեր տպէտ զիւղացիների կոպիտ և անտանելի կեանքը: Հարկաւոր են աշխատաւորներ, ժողովրդի շահերին նուիրուած մարդիկ:

Ֆինլանդիայում երկու օր տպրեցի և այդ կարճ ժամանակում կատարելապէս հանգրատացրի թէ մարմինս և թէ մանաւանդ՝ հոգիս:

Ուրախ սրտով վերադառնում էի հայրենիքս: Երկաթուղու կայտրանում, սեղանի վրայ մի ֆինլանդերէն Աստուածաշունչ էր զրած: Այդ նրա համար է, որ ֆինլանդացին կայտրանում էլ անդործ չը մնայ: Երկաթուղուն սպասելիս նա կը կարգալ Աստուածաշունչը և կը թարձացնէ միտքն ու սիրտը:

— Այո՛, այո՛, մտածում էի ես, այս երկրում ոչ միայն կառքի ու սալլի ճանապարհներն են

հօրաշալի ու հարթ, այլև այն ճանապարհներն են դեղեցիկ ու լաւ շինուած, որոնք տանում են դեպի աստուածալին ճշմարտութիւնը, դեպի լոյսը, բարին և մարդկալին խելացի կեանքը:

ԳԻՌՔԸ ԳԻՒՂՈՒՄ

Մի անգամ գնացի ժողովրդական ընթերցանութեան համար գրքեր հրատարակող բարեկամիս մօտ: Նրա սենեակում նստած, զրոյց էինք անում: Պահարաններում, պատուհաններում, աթոռների վրայ թղթի գրոտած թերթեր են թափուած, գրքեր են գարսած: Դիմագէմը, սեղանի վերեր, ոսկեզրոյն շրջանակի մէջ տպակուտակ մի հինգ-րուբլիանոց թղթաղրամ է քաշարած:

— Ես ի՞նչ բան է, հարցնում եմ ես դարձած, այս հինգ րուբլիանոցն ինչի՞ է այսպիսի պատուի արժանացել:

— Ինձ համար այդ շատ թանկագին փող է, պատասխանում է բարեկամո: Եթէ ես միշոցներ ունենայի, ոչ թէ այդ թուղթը շրջանակի մէջ կը դնէի, այլ ոսկով կը պատէի: Դա կեղանա է, երեսում է, որ հազարաւոր կոպիտ

աշխատաւոր ծեռքերից է անցել, բըքըուել է, շատ է կեղատուել, իւղոտուել, բայց հաւատում էր, որ երբ ես այդ հինգ րուբլիանոցն ստացաի, համբուրում էի, արտասուելով համբուրում էի: Որովհետեւ գա մի վկայ է, որ բարի, խելացի խօսքը մարդկանց սրտի վրայ ոյժ ունի, աղղեցութիւն ունի: Շատ անգամ պատահում է, որ հոգեպէս լոգնում եմ, մտքիցը անցնում է, որ կիզուր եմ աշխատում, չարչարում, որ զրբով ու քարոզով չի կարելի չարիքը ոչնչացնել, ինչպէս որ խօսքով չի կարելի հանգստացնել ալեկոծուած, կատաղած զետը: Բայց երբ նայում եմ այդ թղթաղրամին, նորից ոյժերս վերականգնում են, նորից եռանզի եմ գալիս, նորից սկսում եմ հաւատալ, որ ամեն մի սրտալի, անկեղծ խօսքը միշտ ճանապարհ կը գտնի դեպի մարդկային սիրտը: Ահա ծեղ պատմեմ: — Ես մի փոքրիկ գրքովկ էի տպել, որի մէջ այն միտքն էի յայտնում, թէ մարդիկ իրար չպէտք է հայհոյեն, թէ հայհոյանքը անարժան ու ամօթ բան է: Առանց ինձ գովելու ու պարծենալու, պէտք է ասեմ, որ այդ գիրքը ոգեսորութեամբ էի գրել, գրել ոչ թէ թանաքով, այլ սրտիս արիւնով: Դիրքը լաւ էր տարածւում: Շատ մարդիկ եկան ինձ մօտ այդ գրքի համար շնորհակալու.

թիւն յայտնելու։ Մի օր էլ մի նամակ եմ բա-
տանում հետեւեալ ստորագրութեամբ. «Ա. զա-
ւառի Գ. գիւղացիներ»։ Նամակում դրաժ էր,
որ իմ գրքոյկը հասել է իշեալ գիւղը, որ մի
քանի հոգի կարդացել են և հաւանել։ Թեոյ
գիւղացիներից ժողով են գումարել և ժողո-
վում էլ կարդացել։ Բարի ու անկեղծ խօսքը
կայծակի ուժով լսողների սրտին է գիւղել։
Այդունք և եթ վճռել են, որ գիւղում ոչ ոք
հայհոյանք չանի. ամենքն էլ վճռին ստորա-
գրել են, իսկ զրքի հեղինակին, որպէս վարձա-
տութիւն, հինգ ըուրի են հաւաքել և ու-
ղարկել։ Ի՞հ, ասացէք, ի՞նչպէս այդ հինգ ըուր-
իմանցը շրջանակի մէջ չը պահեմ։ Զէ՞ որ
դա հազարաւոր ըուրիխանոցներից թանկ ար-
ժէ և վարձատրում է իմ ամբողչ կեանքի աշ-
խատանքը։

Այդ խօսքերով վերջացրեց իր բացարութիւ-
նը ժողովրդի համար զրքեր զրող բարեկամս։

Անկարելի էր նրա ասածներին չը հաւա-
տալ։ Եւզոտուած, կեղտոս հինգ-ըուրիխանոցը,
իիրափի, շատ լաւ ապացոյց էր, որ բարի սեր-
մը երբէք անօգուտ չի կարչի, որ տնտատնառ
մի տեղ իր համար արդաւանդ հող կը դանի,
և որ գիւղն այդ տեսակէափց շատ լաւ աս-
պարէդ է։

Գիւղը տգէտ է և խաւար, գիւղը հարբե-
ցող է և աղքատ, բայց ոչ թէ այն պատճա-
ռով, որ առհասարակ գիւղը միշտ ալդպէս
պէտք է լինի, ոչ թէ այն պատճառով, որ
նրան այդ է վիճակուած, որ այլ կերպ չի կա-
րող լինել, ոչ այլ այն պատճառով, որ գիւ-
ղական խաւար մթնոլորտը շատ քիչ է լոյս
մտնում։

Մի գրող պատճում է, թէ ինչպէս մի հա-
սակաւոր գիւղացի գանգատւում էր. —

Զահիլ ժամանակս շատ վատ բաներ եծ
արել, — ինչո՞ւ, որտվէտեւ ուսումնարաններ
չկային, ուսումնարաններ։ Աստուած տալ, որ
գուք մեղ պէս չապրիք, ապրեցէք աւելի լաւ,
որ մարդիկ լիշեն ծեղ, ողորմի տան։

«Ուսումնարան չկար» գանգատւում է այդ
գիւղացին, որ միայն ծերութեան օրերում է,
հասկացել չարիքի իսկական պատճառը — տգի-
տութիւնը։ Ուսումնարան չկայ, բայց որտե-
ղից պէտք է լինի այդ ուսումնարանը, գիւ-
ղացին ծրագրից ծեռք բերի լոյսի, բարու, նրա-
մարիտ — եղբայրասիրական կեսնքի հասկա-
ցողութիւնը։ — Կողմնակի մարդիկ պէտք է
գիւղին օգնութեան հասնեն։ Ասել, որ իբր թէ
գիւղում մի բան գլուխ բերելն անկարելի է,
այդ բամբաստնք կը լինի։ Արդարութեան ու

Նղբայրասիրութեան խօսքը տմէն տեղ իր ոչխունի:

Տեսէ՞ք, մարդը հայհոյանքի դէմ մի լաւ գիրը է գրել և բարի խօսքը որբան ուժեղ կերպով է զարկել մարդկանց սրտերին: Եւ այդ միակ, բացառիկ դէպքը չէ: Մի ուրիշ զիւղում զիւղացիր ընթերցարանի մասին են կարդացել և իսկոյն իրանց զիւղում էլ ընթերցարան են բացել իսկ քանի-քանի մարդիկ են զրբերից սովորել, թէ ի՞նչպէս պէտք է հողը ծշակել, ի՞նչպէս հիւանդութիւնների դէմ կոռւել: Դրբի տուած օգուտները թուելն անդամ զրքուար է: Եւ մեր ժամանակներում նոյնիսկ աւելորդ է լաւ զրքի օգտակարութեան մասին խօսելը: Ամբողջ հարցը նրանումն է թէ ի՞նչպէս կազմակերպել զիւղերում զրքեր տարածելու գործը:

Դրան կարող են շատ նպաստել շրջիկ զրավաճառներ, որոնք զիւղից-զիւղ անցնելով կը տարածեն օգտակար զրքերը ժողովրդի մէջ: Շրջիկ զրավաճառներն իրանք պէտք է զրադէտ լինին, որ զիւղացիների համար կարդան իրանց ծախած զրքերը, պատմեն, հասկացնեն: Եւ զիւղացին ուրախութեամբ կը գնէ լաւ ու հետաքրքեր զիրքը:

Դրքեր տարածելու գործը յաշողութեամբ

կարող են կազմակերպել զիւղական հասարակութիւնները, իսկ որտեղ այդ անկարելի է, զիւղի բահանան, ուսուցիչը, զիւղի ընթերցաւէր երիտասարդները: Այդ գժուար բան չէ: Կարելի է բաղաքից գումարով զրքեր գնել և այդ դէպքում բաւական զիշում են անում, ուրեմն զիրքն աւելի էժան կը նստի և կը ժածէկ իր ճանապարհածախուր: Վերջին ժամանակներս կառավարչական Սենատը մի բացարութիւն տուեց, որի հիման վրայ զեմուտվոները, այսինքն, գաւառական և նահանգական ինքնավարութիւնները, ոչ միայն իրաւունք ունին զրքեր վաճառելու, այլ և պարտաւոր են ժողովրդի մէջ զրքեր տարածել: Այդ նպատակի համար յատուկ զրավաճառներ են վարձուած, որոնք պատրաստ են շրջել զիւղերում և զրքեր տարածել:

Ամեն զիւղում կարելի է որեւէ մարդու մօտ որոշ թւով զրքեր թողնել, որ նա էլ իր կողմից աշխատի տարածել: Կարելի է զրքեր վաճառել նաև հիւանդանոցներում, եկեղեցիների վոանք: Գիւղեցում այնպիսի զիւղացիներ կան, որոնք հիւանդուան և երկրագործական աշխատանքի անբնդունակ — զրանք կարող են զրքերի վաճառումով զրազուել: Իսկ ձմեռը առողջ զիւղացին էլ, անզործ նստելու փոխարէն, թողի այս սուրբ գործին նուիրուի: Ամեն

գրավածառ կարող է նոյնիսկ նիւթապէս օգտուել: Օրինակ մի բուրլուց 20-25 կոպէկ իրան կը մնայ: Իսկ ձմեռ ժամանակ 30-40 կոպէկն էլ վաս աշխատանք չէ: Շատ դիւզա յիներ դարնանն էլ ալդքան չեն կարողանում աշխատել:

Այդպիսի կանոնաւոր կազմակերպութիւնից յետոյ օգտակար գիրքը կը հեղեղի դիւզերը: Իսկ առայժմ գրավաճառութիւնը շատ վաս պայմանների մէջ է զրուած: Պետութեան հաշիւներից երեսում է, որ Ռուսաց տէրութեան մէջ քառասուն և վեց հազար մարգուն միջին թւով մի գրավաճառանոց է զալիս: Աւելորդ չէ այսաեղ լիշել, որ միւննոյն ժամանակ ամեն մի դինեառունը զալիս է հազար մարգու: Այսինքն, այնտեղ, ուր առուտուր է լինում և ժողովրդի հաշով պահեռում է քառասուն և վեց (46) զինեառուն, կարողանում է պահել մի գրավաճառանոց: Ուրեմն, զինեաները 46 տնգամ աւելի շատ են, քան թէ զրավաճառանոցները: Ահա թէ ինչու է ժողովուրդը խաւոր, տգէա, հարբեցող, աղբատա: Նա պէտք է 46 զինեառն կողքից անցնի, որ հասնի մի գրավաճառանոցի:

Վերջին ժամանակներս զիւղացիների մէջ լուսաւորութիւնը տարածելու փորձեր են անում,

բայց որքան որ արուել է, շատ ու շատ չընչին է: Տգէա ժողովուրդը շատ է, թանձր խաւոր պատել է նրան և մեծամեծ եռանդ ու ոլժեր են պահանջւում, որ նրա մէջ լոյս մըտցնեն:

Սորդեօք չե՞ն գտնուի մարդիկ ալդ նոր, բարի գործին ծառայելու համար:

Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ

Հնուց մնացած սովորութեամբ՝ մի քանի ժողովուրդների մէջ շատ գործեր ընկերութեամբ են անուում: Օրինակ, հայերս դարնան բացաւելուն, Զատկին կամ Վարդավառին ամբողջ զիւղով մատաղ ենք անում: Եւ ոչ մի զիւղացի, որքան էլ նա չքաւոր լինի, իրան հեռու չի պահում ալդ ընկերական գործից, մի որեւէ կերպով մասնակցում է նրան:

Այդ մի շատ զեղեցիկ սովորութիւն է, որը հարկաւոր է մացնել նաև ուրիշ գործերի մէջ, որովհետեւ վերջինս որքան էլ որ դժուար լինի, եղբայրական միութեան ու համերաշխութեան առաջ չի կարող դիմանալ և անպատճառ զլուխ կը գայ:

Սաղմոսերդու Դաւիթ մարգարէն իր որքա-

զան երգերից մէկում ասում է՝ «Ո՞ղքան լաւ
ու դուրեկան է, երբ եղբայրները միասին են
ապրում»:

Մենակ գործ անելլը, մարդու համար շատ
դժուար է: Ամեն մի գործ աւելի լաւ է ա-
ռաջ գնում, երբ միացած ոյժերով է կատար-
ում: Երբ մարդիկ իրար օդնում են՝ աշխա-
տանքը թեթևանում է: Երբ ուրախանում ես
և քեզ հետ ուրիշ ուրախացողներ էլ կան,
ուրախութիւնդ կրկնապատկւում է: Երբ սիր-
արդ ժանր վշտից ժանրացած է և վշտից ըն-
կերակից ունիս, բեռդ թեթևանում է: Իզուր
չեն ասում, որ ընկերովի մեռնեն էլ հեշտ է:
Այդ պատճառով էլ շատ լաւ է, երբ մի ընդ-
հանուր գործ կայ, որի շուրջը խմբւում են
մարդիկ:

Մեզանից անեն մէկն իր սազն է ածում, ա-
մեն մէկն իր զուռնան է փխում: Ամեն մէկն
իր գործը, իր մտածողութիւնը, իր նպատա-
կը, իր օգուան ունի, որոնք շատ անգամ դէմ
են ուրիշներին: Այդպիսով, որքան առաջ ենք
գնում, աւելի ու աւելի օտարանում ենք իրարից,
կորյսում ենք մեր հոգեկան փոխադարձ կապը:
Իսկ առանց այդ կապի մարդու սիրով շատ է
ժանրանում, ինչպէս որ մարդինն առանց տաքու-
թեան մրսում է, այնպէս էլ հողին առանց փո-

խաղարձ սիրոյ, առանց փոխադարձ կապի՝ սառ-
չում է: Հոգեկան կապ կարող են լինել որևէ էրնդ-
հանուր բարի գործի մասին ունեցած հոգսերը,
մտածմունքները: Ինչպէս որ ցուրտ եղանակին
տաքանալու համար միենոյն խարուկի շուրջը
հարիւրաւոր մարդիկ են հաւաքւում, այնպէս էլ
ընդհանուր գործը բոլորին մօտեցնում, մտերմա-
ցնում է, լուսաւորում է իր նուրբ, փրկարար
լուսով, յանուն լաւ գործի տաքացնում է եղբայ-
րական համերաշխ սիրոյ շերմութիւնով:

Ոյդ պատճառով մենք ուզում ենք մի բա-
րի գործ ցոյց տալ, որն այնքան անհրաժեշտ
է մեր հայրենիքի ամեն մի խուզ անկիւնում և
որը մատչելի է նոյնիսկ չնշին նիւթական մի-
շոցներ ունեցող, բարեխիղճ մարդկանց ամենա-
փոքր խմբին անդամ:

Մեր խօսքը ընկերութեամբ գրքեր գնելու
մասին է: Մեր ընթերցողների մեծամասնու-
թեան համար երեք - չորս բուրլի նուիրելն ոյ-
ժից բարձր չէ, իսկ 10 - 15 հոգուց շատ խըմ-
բեր կարող են կազմուել, որոնց անդամներն
առանց զժուարութեան տարեկան 5 - 10 բուր-
լի նուիրեն բարի գործին:

Մեր օրերում նոյնիսկ 3 - 4 բուրլիով կարե-
լի է բաւական թւով օգտակար, խելացի ու
լաւ գրքեր գտել: Փառք Աստծու, այժմ մեր

մէջ էլ սկսել են քեչ-քիչ օգտակար զրբեր տպելու մասին մտածել: Մի քանի կոպէ-կի կարելի է արդէն մի դիրք ձեռք բերել: Մէկ-երկու տասնեակ խելացի դիրքն էլ կարող է խաւար անկիւնները բաւականաչափ լոյս մացնել, զարթեցնել թմրած միտքը, շատ բարի դպացումներ շարժել մարդկանց մէջ:

Ընկերովի գնած զրբերն ընթերցողներին իրար կը մօտեցնեն, կը մտերմացնեն, մտքի փոխադարձ շփումն առաջ կը բերեն, խօսակցութիւնն աւելի բովանդակալից, օգտակար կը գարձնեն:

Միայած ոյժով թանկագին զրբեր գնելն էլ հեշտ է: Նաև լաւ զրբեր կան, որոնք մենակ չեն կարող ձեռք բերել, որքան էլ որ աշխատես, ինչպէս օրինակ Սատուածաշունչը, զիւդանանեառութեան վերարերեալ զրբեր և ալլն:

Ալդպիսի զրբերից թէ հոգու, թէ խելքի և թէ տնտեսութեան համար անվերջ օգուտներ կարելի է սատանալ, բայց գները թանկ են, շատ անգամ երեք-չորս բուրլի: Մի մարզը միանդամից այլքան փող չի կարող վճարել ուստի, շատ խելօք գործ կը լինի, եթէ միացած ոյժերով գնուին և միասին էլ կարդացուին: Նաև անգամ մարդ ինքը տեղ-տեղ չի հասկանում կարդացածը, ընկերդ կարող է

հասկանալ, և ալդպէս, իրար օգնելով, թէ նիւթապէս, թէ բարոյապէս ու մտաւորապէս բոլորդ էլ օգուտ կստանաք:

Միքանի զիւղերում արդէն ընկերովի զիւղատնաւսական մեքենաներ են ձեռք բերել քաղելու, ծեծելու, մաղելու և ալլն: Ժամանակ է նաև մտքի ու սրաի մշակման մասին մտածել: Առաջմ մեզ մատչելի, ամենահեշտ միշցը - զրբեր են: Մէր պայմանները, կեանքի հանգամանքները դեռ ևս այդ քանի հաղիւ են թույլ տալիս, ուրիշ շատ միշցներ էլ կան մեր լուսաւորութեան դորձն աւելի յաջող առաջ տանելու համար, բայց մեզնից անկախ պատճառաներով գեռ ևս անկարող ենք այդ միշցներին դիմել: Գոնէ զրբերի մասին մտածենք:

Կարելի է կը հարցնեք, ի՞նչպէս բաժանենք գնած զրբերը: Դրա պատասխանն այս է — ինչու պէտք է բաժանենք, թող միշտ էլ միացած լինի այդ հարստութիւնը և նրանից թող ամեն մարդ էլ օգտուի, նոյնիսկ փող չփառողները: Միքիչ էլ մեր եղբայրների համար զոհաբերութիւն անենք, նրանց էլ օգնենք:

Լաւ զիւրը չըհորի նման, աղբիւրի նման մի բան է: Զրհորից կամ աղբիւրից ինչքան մարդ էլ որ չուր խմէ, չի ցածարի: Ալդպէս էլ լաւ զիւրը: Մի 5-10 հոգի ընկերովի մի

բանի զիրք զնեցէք — թող հարիւր հոգի կարդան, խելք սովորեն, լուսաւորուեն:

Բաշկիրները, որ կիսավայրենի թաթարական մի ժողովուրդ են և անապատում են ապրում — մի գեղեցիկ սովորութիւն ունին. — անապատում ջրհորներ են փորում, բերնին աման կախում, որ անցորդները, հեռաւոր երկրներից եկող ճանապարհորդները, շոգից լոդչուր խմեն, հովանան, հանգստանան: Եւ տասնեակ տարիներ մնում է ջրհորը. Հարիւրաւոր հազարաւոր մարդիկ ջուր են խմում այն աեղից, զովանում:

Ենորհսկալութիւն ջրհորը շինող բարի մարդուն, ոչ ոք նրա անունը չդիտէ, բայց Աստուած գիտէ:

Մեր շուրջը մերկ, անջուր, յամաք անապատ է: Կենդանարար ջրի շատ աղբիւրներ ու կում է հոգեկան ծարաւից:

Եկէք ջրհորներ փորենք, զրքեր տարածենք, բայց անենք, ուրիշների էլ լուսաւորուենք, աչքերս թետ ընկած զիւղերում համեստ, առանց աղմուկի առաջ տանենք մեր փոքր գործը, որ

Յիսուսն իր աշակերտներին քարոզելու ուղարկելիս հետեւեալ պատուէրը տուեց. —

«Ով որ իմ փոքր եղբայրներից մէկին մի ամսն սառը ջուր տայ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նա կստանայ իր վարծատրութիւնը»:

Խ Ա. Ռ Ո Յ Կ Ը

Կատաղի ծմեռ է: Սառնամանիքն աւելի ու աւելի սասականում է: Թուչունները թռած տեղերն, օգում սառչում են: Մարզիկ ցրտից կծկում են և սառած քթերը, թշերը տրորելով քոլերն արագայնում, որ տաքանան:

— Այսպիսի ժամանակ մի տաք անկիւն ունենալին ինչ լուր բան է, մտածում են ամենքը և տաքանալու տեղ փնտռում: Բարեբախտաբար ահա կրակ — ուրեմն կը տաքանան:

Փողոցի մէշտեղը մի խարոյիկ է վարած. Փայտի կարները ճարճաթիւնով այրւում են, բոցավառվում և շուրջ կենդանարար չերմութիւն տարածում: Եարունակ խարոյիկ շուրջը մարդիկ են խմբուած: Ահա լուացքը շալակին մի լուացքար կին, նրա ճանապարհը հեռու է, իսկ ծեռները կապտել են, քիչ է մնում մատները թափուեն. և եթէ նա մատներից

զրկուի, իր չորս եղբայրների հետ պէտք է քաղցից մեռնի: Բայց ահա տեսնում է խարոյկը, մօտենում է նրան, տաքանում է և խարոյկը վառողներին օրչնում: Նրա կողքին կանգնած տաքանում է մաշուած հագուստով մի արհեստաւոր, որ նոյնպէս ամբողջ մարմնով դողում է. ի՞նչ կանէր, եթէ խարոյկը լինէր: Նրա էլ ամբողջ ընտանիքը պէտք է առանց մի կտոր հացի մնար: Բայց ոչի՞նչ, հոգս է, խարոյկի մօտ մի քիչ տաքացաւ — կարող է ճանապարհը շարունակել: Այդտեղ կանգնած է նաև խանութում ժառայող մի պատանի: Արտասուրի կաթիլները վլորուել են նրա աչքերից և երեսի վրայ սառել — մնացել: Պատանին, կրակի բոցերից տարուած, փայտի կառով խարոյկն է խառնում: Եւ ամենքն էլ այստեղ գոնէ միքանի ըոսի մոռանում են շրջապատող սառնամանիքը: Խարոյկը, որ մի մեծ աշխատանք չի պահանջում, որ միքանի կոպէկի բան է, մի օրուայ ընթացքում հարիւրաւոր անցորդներ է տաքացնում, տասնեակ մարդիկ է աղատում սառչելուց, հիւանդանալուց և մահից:

Չմեռ ժամանակ նայում ես այդ խարոյկներին և մտածում. — ինչու խարոյկներ չկան մարդկանց հողին տաքացնելու համար:

Մենք հոգեստէս սառել ենք, մեզանից ցուրտ է փշում, մեր հոգին տաքացնելու տեղ չկայ: Մեծ բարեգործութիւն անելու համար մեծ ոյժ է հարկաւոր — մենք այդ չունենք: Բայց մի - մի խարոյկ վառել — ամենքս էլ կարող ենք: Դրա համար մեծ ժախս հարկաւոր չէ, մի քանի կտոր փայտը բաւական է. ժամանակ էլ շատ չի պահանջում և աշխատանք էլ քիչ է հարկաւոր: Մինչդեռ այդ քչով էլ կարելի է մէկ - երկու տասնեակ սառած կարօտեալների տաքացնել:

Ահա ձեզ մի օրինակ բերեմ, որից կը տեսնիք, թէ որքան հեշտ է բարւոյ մի փոքր խարոյկ վառելլը: Միքանի օրիորդներ նոր աւարտեցին ուսումնարանը և ուղեցին իրանց նոր կեանքը որևէ բարի գործով սկսել: Մեծ միջոցներ չունեին, նրանք բոլորն էլ պէտք է ծանրը աշխատանքով ձեռք բերելին իրանց կտոր հայրը: Բայց նրանց ապագայ կեանքը, որքան էլ որ ծանր լինէր, այնուամենայնիւ գիտէին, որ շատ - շատերը իրանցից աւելի վատ զրութեան մէջ են: Մտածեցին սառը և մութը նկուղներն ու գետնայարկերը լոյսի և տաքութեան մի կայցէլ է մտցնել: Նրանք մի տեղ խմբուեցին, ամեն մէկը պարտաւորուեց ամսական 1. 2 բուրլի տալ: Քաղաքի ծալրուց

ամսական 25 րուբլով մի բնակարան վարձեցին և մի փոքրիկ ռւսումնարան բացին։ Ամենաչափառ ընտանիքներից մի տասը փոքրիկ աղջիկներ վերցրին, մաքուր հաղցրին և սկսեցին կրթել նրանց։ Աւելորդ ժամանակ չունեին, բայց ամեն մէկը հերթով շաբաթուայ մէջ միքանի ժամ պարապում էր։ Աղջիկներն ամենօր ռւսումնարանում էին անցկացնում։

Բարի վարժուհիներն իրանք էին պատրաստում աշակերտուհիների ձաշն ու նախաճաշը, որ օրական 50-60 կոպէկ էր նստում։ Այսեղ ամեն բան հասարակ, պարզ ու համեստ էր, բայց թէ ռւսումնարանի այդ փոքր սեակներում այնքան սէր, այնքան հոգածութիւն են ստանում, որ երեխաները կենդանանում են։ Չորսցած ծաղիկների պէս նրանք նոր մթնոլորտում նորից բացուեցին ու թարմացան։

Իհարկէ, այդ մի մեծ գործ չէ։ Լըազրների միջոցով լուրը ամբողջ աշխարհին չէ հասել։ Պատմաբաններն էլ այդ չնչին գործի մասին ոչինչ չեն գրել իրանց ռւսումնասիրութիւնների մէջ։ Եւ ի՞նչ մի մեծ գործ է արուած։ — մի քանի աղքատ աղջիկների աղաստան է արուած։ Բայց չէ որ ամեն մի աղջիկն էլ կենդանի մարդ է, հոգի ունի, գորոցի միջո-

ցով աղատում է ապագայ սարսափելի կեանքից։ Այստեղ նրա մէջ զարթեցնում են բարի ողին, աշխատանքի են վարժեցնում, պատրաստում են նրան համեստ, բայց ոչ բոլորովին խաւար կեանքի։ Եւ վերջապէս՝ ապագայում ինչ էլ որ լինի, գոնէ երեխայական հասակում խեղճ աղջիկները լոյսի մէջ կապրին և գմառատ խնտածք կը վայելեն։ Կեանքն ապագայում իր անց ինչ տեսակ սառնամանիքով էլ որ զիմաւորի, այսուամենայնիւ արդէն մէջները միքիչ տաքութիւն ունին, որը չի թողնի նրանց բոլորովին սառչելու։

Եւ այդ ամենն ինչ արժէ։ — օրական երկու ըու ըլի՛:

Եւ այդպիսի գնով հարիւրաւոր երեխաներ կարող են կեանքի սարսափելի ժխորից աղատուած լինել, կարող են իրանք տեսնել լոյսը և այդ լոյսը մտցնել իրանց ընտանիքների խաւար մթնոլորտը։ Ուրափիսի փոքր միջոցներով նրան բարիք կարելի է գործել։ Հարկաւոր է միայն սրտով աշխատել։ Անտառում հազարաւոր ծառներ ու գերաններ կան, բայց մարդըն այնտեղ սառչում է։ Բայց եթէ խարոյիկի մէջ երկու-երեք կտոր փայտ ձղես և կրակ գնես — հարիւրաւոր մարդիկ կը տաքացնես։ Գլխաւորն այն է, որ կրակ լինի, տաքութիւն,

չերմ սէր լինի դէպի բարին, անհրաժեշտն այն
է, որ մարդ տաք սիրտ ունենայ:

Մէր մէջ որքան անդորք մարդիկ կան ու
կանաք, օրիորդներ, որոնք չը զիտեն, թէ ինչ
գործ անեն: Աչա ձեզ գործ. — բարւոյ խա-
ռոյկներ վառեցէք, ձեր ծանօթներից փոքրիկ
ամսավճարներ հաւաքեցէք, գործ զրկք ձեր
սեփական ոյժերը, աշխատանքը, կաղմեցէք
ուսումնարան, փոքրիկ ապաստանարան, ման-
կական մառւր: Սաները թող քիչ լինին, ոչինչ:
Զէ որ երբ նաւ է խորտակւում, խեղզուող-
ներից մէկին-երկուսին ազատելն էլ դատարկ,
անշան գործ չէ: Ցրտից սառչող մի մարդու
ազատելը մի կենդանի հոգի փրկել է:

Եթէ մի քանիսի մասին չես կարող հոգալ,
հոգա՛ մէկի մասին, խնամի՛ր մէկին, գուցէ մէ-
կին պէտք է զրել — կարդալ սովորեցնել, միւ-
սին բժշկել, երրորդին՝ հոգեպէս մխիթարել
— այդ բոլորն էլ ամեն մի մարդու մատչելի է:
Բարւոյ խարոյկները մանաւանդ անհրաժեշտ
են զիւղերում: Այնտեղ շատ մարդիկ են ցըր-
տի տակ առանց օթևանի թափառում, իսկ
նրանց տաքացնելն այնքան էլ ժանը գործ չէ:

Ամբողջ զիւղով միանալ և մի խրճիթ շի-
նելը — խաղալիքի նման հեշտ է: Գմուար չէ
նաև մի այրի կին, մի հասակաւոր աղջիկ դրտ-

նելը, որը յանձն կառներ խնամել անտէր որ-
բերին: Ամբողջ զիւղի համար գմուարութիւն
չէր լինիլ նրանց կերակրելը. — որը մի քիչ
ալիւր կը տար, որը մի աման ցորեն, որը հաց,
որը մի խուրծ խոտ: Եւ այդպիսով որբերը փո-
ղոցի և մուրացկանութեան փչացնող մթնո-
լորտից գուրս կը գալին: ապագայում ազնիւ
աշխատանքով ապրող մարդիկ կը զառնալին:
Աւելի հեշտ կը լինէր այդ գործը վլուխ բերել,
եթէ մի քանի զիւղ միանալին: Եւ բարի գոր-
ծի անունով միանելը ինքնըսափնքեան արդէն
աշագին ազգեցութիւն կանէր զիւղական հա-
սարակութիւնների վրայ, կը եղբայրացնէր
նրանց, խմբելով ընդհանուր գործի շուրջ:

Ցուրտ է, եղբայրներ, Ցուրտ! Ամեն տեղ
սառնամանիք է տիրում, մենք բոլորս հոգով
սառել ենք: Ասաուած տալ՝ գարուն կը գալ,
չերմութիւն կտայ, արդարութեան և սիրով,
եղբայրութեան և համերաշխութեան արելը
կը տաքացնէ, իսկ ալժմ ցուրտ է, սառնամա-
նիք է, մեր սրտերը սառած են:

Խարոյկներ վառեցէ՞ք!

ՀՈԴՈՎ Ա.ՂԻԱՑՆԵՐ

Հեւու անապատում, քարերի արանքում ձի խոտ է բուսել: Քարերն իրար վրայ թափթթված բարձր բլրակ են կազմել: Քարերի վրայ լոյս կայ և արև, իսկ տակ՝ խոնաւ ու խաւար է: Խոտն ամբողջ ոյժով դէպի արևն է ձգում, գալարւում, այս ու այն կողմն է ոլորւում, նեղ ճեղքերից է անցնում և վերջապէս՝ հասնում է ազատ տեղը, լոյսին, արևին:

Ժողովրդի զարթեած միտքը նոյնպէս մատաղ բոյս է և գալարւող խոտի պէս ձգում է դէպի զիտութիւնը, խելացի ընթերցանութիւնը, չընայելով բաղմաթիւ անյարմարութիւններին ու նեղութիւններին՝ աղատութիւն է փնտռում:

Յահախ ու ղղակի զարմանում ես, թէ ինչպէս է յաղեցնում մեր ժողովուրով իր հոգեկան քաղցր:

Մի քաղաքում, օրինակ, ամառը կարելի էր այսպիսի տեսարանի ականատես լինել. հրապարակում, իրարից քիչ հեռու, երկու մուրացկաններ են նստած, — նրանց շուրջ միշտ մարդիկ են խծուած: Մուրացիկները բարձր ձայնով զանազան զրքեր են կարդում, իսկ ամ-

բոխն ուշադոս թեամբ լսում էր: Դէմքերը արուած էին և լուրջ, երեւում էր, որ մտածում էին:

Ընթերցանութիւնից յետով՝ իսկոյն մաքերի տաք փոխանակութիւն էր տեղի ունենում: Եւ պէտք էր աեսնել՝ թէ այդ ժամանակ սեցած, ալրուած դէմքերն ի՞նչպէս էին լուսաւորում: Հոգու որբան չերմութիւն կար այդ, ըստ երեսոյթին, կոստացած, կարիքից ճնշուած մարդկանց մէջ: Իրանց սրտին որբան մօտ էին ընդունում կարգացած պատմութիւնները:

Ուրախանում էին, լսած պատմութեան մէջ լաւ մարդիկ յաջողութիւն էին ունենում, և տիրում, երբ անյաջողութեան էին հանդիպում: Մուրացկանների առաջ, ժողովարութեան համար ամաններ էին զրած: Ունկնդիրներն առատութեամբ տալիս էին իրանց տուրքը, որը փող, որը հաց, որը խնձոր:

Մի անգամ ես կանգնեցի հրապարակում և լսեցի մուրացկանի կարգացած հետեւեալ պատմութեանը. —

« — Ի սէր Քրիստոսի, ողորմեցէք, դողդողալով զիմեցին երկու մուրացկան կանացը անցնող մի հարուստ պարոնի: »

« — Աստուած տայ, պատասխանեց նա:

« Երկրորդ, երրորդ պարոնին զիմեցին, բայց

ամենքից էլ միենոյն պատասխանն ստացան:

« — Աստուած տայ, Աստուած տայ, շըրն-չում էին կանալը, սովից կը մեռինք, ոչ ոք այսքան մարդկանցից խիղճ չ'ւնի, որ մի կտոր հաց էլ է տայ:

Այդ գէպքին ականատես անդամալոյժ մուրացկանը, որ ինչպէս ասացինք, կանանց յետեկից էր գնում, կանչեց նրանց, մէջքից ցած բերեց իր տոպրակը, երեք կտոր հաց հանեց, տուեց կանանց ու երեխալին: Սրանք, զլուխ տալով և շնորհակալութիւն յայտնելով, հեռացան»:

Երբ այս պատմութեան ընթերցանութիւնը վերջացաւ, ունկնդիրների մէջ տաք խօսակցութիւն բացուեց:

— Ուրեմն, աղքատն է աղքատին ողորմութիւն արել, հարուստն անցել է, ոչինչ չի տուել, աղքատը տուել է, աղքատը խղճացել է, խօսում էին լսողները:

Ես նայում էի այդ մարդկանց և մտածում:

— Զեր մօտից որքան մտքով և ուսումով հարուստներ են անցնում, բայց նրանցից ոչ մէկն էլ չէ ողորմում:

Հետաքրքիր է և մի այլ գէպք. —

Մի բանւորի ձեռքը մեքենալի տակը մնաց և կտրուեց: Բանւորն աշխատանքի անընդու-

նակ դարձաւ. բայց չը յուսահատուեց: Նա իր վերջին երեք բուրլիով փոքրիկ զրբոյկներ գնեց և սկսեց հրապարակներում, փողոցներում շըր-շիլ ու բարձր ձախով կարդալ:

Նրա շուրջը հաւաքւում էին 10-15 հոգի և լսում. յետոյ ամեն մէկը մի կոպէկ էր տա-լիս նրան որպէս զարձատրութիւն: Դրանից յետոյ նա բոլոր բանւորների մէջ յայտնի զար-ձաւ: Բոլորի համար նա մի սիրելի հիւր էր: Շատ անգամ նա իր գրքերից տալիս էր գրա-դէսներին կարդալու:

Այս բոլորն, իհարկե, շատ լաւ. է, բայց մի-թէ մենք, ուսում առած մարդիկս, որ խա-ւար ժողովրդի մեծ եղբայրներն ենք, մեր փո-քըր եղբօր ողորմութիւն հայցող ձախնին իրա-ւունք ունենք պատասխանել՝ «Աստուած տայ»...

Զէ որ մեզանից ամեն մէկն էլ մի բանի գիրք ունի, աղատ ժամանակ էլ անպատճառ կունենայ. կարող է իր տանը կանչել լսել ցան-կացողներին և կարդալ, բացատրել:

Եթէ այդ մի հասարակ բանւորի ոյժից վեր չէ, մեր ոյժից առաւել ես բարձր չէ, և ամօթ մեզ, որ կարող ենք, բայց ոչինչ չենք անում:

Մեր փոքր եղբայրը դէպի արեն է ծառում, լոյս է փնտռում, մեզանից օղնութիւն է հայ-

ցում, իսկ մենք անշարժ, խուլ, համբ ևնք մնում:

ԼՈՒՄԱՅ

Մի անդամ Յիսուս իր աշակերտների հետ նստեց տաճարի դաւթում և սկսեց դիտել, թէ ինչպէս մանող — ելնողները փող էին գցում գանձարանը:

Հարուստները շատ էին գցում. — բռով ոսկի ու արծաթ: Ամենքից վերջը գալիս էր մի չքառ այրի կին: Իր հագած ցնցոտիներից ու տալիք աննշան նուերից ամաչելով, նա երկիւղով մօտեցաւ գանձարանին և երկու լումայ գցեց, մեր փողերով երկու գռօշ:

Ի՞նչ զին ունէր այդ նուերը: Ի՞նչ բանի կարող էր պէտք դալ այդ չնչին ընծան: Երկու լումայով մի քար անգամ չի գնուի տաճարը նորոգելու ժամանակ, երկու լումայով մի մոտին չի դուրս դալ, մի կտոր խունկ չեն տալ որ ծխես:

Սակայն Յիսուսը ոչ միայն նկատեց այրի կնոջ նուերը, այլև առանձին ուշադրութիւն դարձրեց նրա վրայ: Մատնացոյց անելով այրի կնոջ՝ Քրիստոս ասաց իր աշակերտներին. —

— Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ աղքատ կինը ամենքից շատ նուերեց, որովհետեւ սրանից առաջ եկողները իրանց աւելորդ փողը տուին, իսկ սա իր ամբողջ կարողութիւնը ձգեց Տիրոջ գանձարանը:

Մեր ժամանակներում, երբ ամեն ինչ փողով է չափում, երբ մարդու արժանիքը իր փողի բասկով է կշռում, Աւետարանի այս առածը առանձին նշանակութիւն ունի:

Մենք բոլորս հոգեպէս հիւանդ ենք. մեր խիզնը չարութեան ու կեղծիքի հաստ թաղանթով է ծածկուել, և այդ պատճառով էլ չենք կարողանում տարբերել չարն ու բարին, չենք հասկանում, որն է Ճշմարտութիւնը, որը մարդկային մոլորութիւնը:

Մենք շարունակ այն կարծիքին ենք, որ իբր թէ արդարութիւնն ու նշմարտութիւնը կեանքի մէջ մտցնելու համար հարկաւոր են մեր սովորական միջոցները — փողի մէծամեծ դումարներ, Փիզիքական ոյժ և ամենամեծ ուսումնականութիւն:

Սակայն մոռանում ենք, որ ինքը Յիսուսը անհաւատ հրէաների աչքում մի հասարակ հիւանի որդի էր, որ նա՝ իր քարոզների ժամանակ՝ նոյնիսկ մի անկիւն չունէր, որ կարողանար հանդստանալ, որ նրա գրպանում մի

բառասուն կոպէկ էլ չկար, որ իրանից պահանջուած տուրքը վճարէր:

Չնայելով այդ բոլորին, Յիսուսը երկրի վրայ հիմնեց Աստուծոյ արքայութիւնը, որը ժամանակի ընթացքում աւելի ու աւելի աճում ու պնդանում է:

Աղքատ արի կնոջ մասին յայտնած նրա կարծիքը մեզ լաւ խրատ է տալիս, որ Աստուն հանելի գործ անելու համար՝ հարկաւոր է ամենից տռաջ ոչ թէ քո մեծ ուսումնականութիւնը, ովքն ու փողը, այլ այն, թէ որքան սէր ունիս զէպի ծշմարտութիւնը և թէ որքան անձնուէր ես դէպի մարդիկը:

Փողը արդարութեան ու ծշմարտութեան գործում ամենալեախն տեղն է բռնում: Աստծոյ արքայութեան մեծութիւնը մեր ծախսած բուբլիների քանակութիւնից չէ կախուած, այլ այն սիրոյ մեծութիւնից, որ գործազրում ենք նրա վրայ:

Գործարանում ծառայող մի քանի աղջիկներ մի քաղաքում բաց արին մանկական ապաստանարան և մասուր (ԱՅԼԻ): Փողով չքաւոր էին, բայց սրտով հարուստ, սիրում էին մերձաւորներին, սիրում էին բոլորին, արդարութիւնը, և տեսէք թէ վրանով ինչպիսի գործ առաջ բերին: Եւ աղայալում կը տես-

նէք, թէ որպէս կանէ, կը զարգանալ այդ գործը, ևթէ նրան նուրուած աշխատաւորները չեն թուլանալ հոգով, չեն դադարի սիրելուց:

Կրկնում եմ, Աստուծոյ գործը փողով չէ շինուած, այլ բարի սրտով, սիրող հոգով: Նա մարդուց պահանջում է ոչ թէ փող այլ ամենից առաջ նրա հոգին, նրա սիրութ:

Մեծ քաղաքներում գոյութիւն ունին հագործաւոր, ամեն տեսակ բարեգործական ընկերութիւններ, զբանց նիւթական միջոցները միխօններով են չափուած, սակայն նկողների ու զետնայարկերի չքաւորութիւնն ամեննեին չի ողակասում, մեր զբկուած եղբայրների զրութիւնը չի փոխուած և նրանց սիրան աւելի ու աւելի չորանում ու կոշտանում է: Ինչու ու աւելի չորանում ու կոշտանում է: Որովհեան փողատէրերը տալիս են փողը և իրանք մի կողմ քաշւում, որովհեան նրանք նոյնիսկ բարեգործութիւնը վարձուած մարդկանց միջոցով են անում, որովհեան այնակը, ուր հարկաւոր է սիրար գործազրել, զրապանն են գործազրում, սիրոյ փոխանակ իրանց զրկուած եղբօրը քսանին են առաջարկում: Նրանք իսկ որ Աւետարանի առաջարկում է նման հացի փոխարէն քար են ապիս և ծիփի փոխարէն՝ օծ:

Դժբախտ թափառաշրջիկին, անդամալու ծին,

Հարբեցողին, հիւանդին կերակրելը, բժշկելը,
հագուստ տալլ շատ ու շատ քիչ է — աւելի
կարևոր է նրան սիրով տաքացնելը, եղ-
բայրական հոգածութեամբ ու դժով նրան
մօտենալը:

ԶԵ որ նա հոգեպէս աւելի շաա է տանչւել,
բան մարմնով, չէ՞ որ նա մարդկանցից չարա-
ցել է, զազանացել է, վալրենացել է: Փողով
նրան նորից մարդ չես կարող դարձնել: Նրան
նորից զդալ տուր սիրոյ ոյժն ու զօրութիւնը,
տուր նրան քո սիրար:

Մարդկանց համար ամենակարեռը՝ սէրն է,
խսկական սէրը:

Խսկական սիրոյ ոյժը ոչ արշինով է չափ-
ում, ոչ փթով, այլ արդարութեան ու ճրշ-
մարտութեան նուիրուած լինելու չափով:

Ամեն մի մարդ կարելի է առանձնապէս, մե-
նակ քիչ բան անէ: Բայց չէ՞ որ բոլորս միա-
սին վերցրած՝ թւով շատ շատ ենք:

Ժողովութիւնը պատմում է, որ մի անգամ մի
թագաւոր իր անթիւ զօրքերով անցնում էր
անապատից և ուզեց այդտեղ մի լիշտակ
թողնել: Հրամայեց, որ ամեն մի զինւոր իր
զիխարկով լիբը հող բերէ:

Եւ խսկոյն տափարակ տեղում մի սար
զոյացաւ:

Հարիւրաւոր տարիներ են անցնում, անձրւն
է գալիս, բամին է փչում, բայց այդ լիշտա-
կը մինչեւ օրս էլ կանգնած է իր տեղում:

Այգպէս է և կեանքում: Եթէ մենք յանուն
բարեգործութեան միանալինք և չքաւոր այ-
րի կնոջ նման մի - մի կաթիլ եռանդ գործ
ոնենք թէ բազաբներում, թէ զիւղերում, ա-
մենք անապատից մէջ տեղ, ինքնասարութեան անապատի մէջ
տեղ ահապէս սարեր կը դոյանալին: Կեան-
բարոյ ահապէս սարեր կը նայեն ալի սարերին և
քի անցորդները կը նայեն ալի սարերին և
կորցրած ուղին կը դառնէին:

Ազնիւ ծգտումներդ ազատ թող, թող նր-
անք գործեն ազատ — համարծակ մարդկա-
րանք լին լինիստութեան անապատում: Մինչեւ
վերը տար սկսածդ եղբայրասիրական դովելի
գործը:

Խաւար ժողովրդի, ագէտ ամբոխի, մոլո-
րուած ազգակիցներիդ բարօրութեան ու եր-
չանիկ կեանքի համար զոհիր ամբողչ կեանքդ,
արեանդ վերցին կաթիլն անգամ առանց խնա-
յելու և վախենալու: Մի հանգցնիր, մի ոչըն-
չացնիր այն չերմ սէրը գէպի եղբայրներդ, որ
ամեն մարդու մէջ լնականից կայ: Մարդկանց
յարութիւն տուր գիտութեան չահով, որ մի
հրաշալի ու կախարդական ոյժ է:

Մի խնալիր քո լու ման:

ՈՂՈՐՄԱՆ ՍԱՄԱՐԱՅՑԻՆ

Պատմում են, թէ ինչպէս ծառայութիւնը
վերջացրած մի զինոր վերադառնում էր իր
հայրենի զիւղը։ Նա համարեած հասել էր ի-
րանց առևնը, մի-երկու վերստ էր մնացել։ Սադ
ժամանակ յանկարծ սասարիկ փոթողիկ բար-
ձրացաւ, ծիւն եկաւ, քաջին փչեց, պտոյտ
տուեց և ամեն ինչ խորասուզուեց խաւարի
մէջ։ Զինորը ճանապարհու կորցրեց։ Նա, որ-
քան զիտէր, պէտք է վազուց արդէն գիւղում
լինէր, այնինչ շուրջը ոչինչ չի երևում։ Բուքը
կուրացնում էր նրա աչքերը։ Խեղճը բոլորու-
վին չարդուեց։ Նրա ոտքերը ծալւում էին,
ուղում է ընկնել գետնին, հանգստանալ, բայց
լու զիտէ, որ եթէ միքիչ զուսիր թեքի, մի
քանի բոսկ պառկի — յաւիտենական քնով կը
քնի։ Բայց միթէ պէտք է նա հայրենի զիւ-
ղի ծօտ, զուցէ հարեանի տան կողքին՝ ստո-
չի...

Նա սկսեց ձայն տալ, օդնութեան կանչել:
Ոչ ոք չի լսում մոլորուած երիտասարդին:
Միայն չար քամին է, որ իր ոռնոցով ու սու-
բազով պատասխանում է նրա ձայնին, արծա-
գանք է տալիս:

Զինւորս վերջին ոյժերն է հաւաքում, չանք
է դուռմ, զօռ է տալիս ոարերին և բաց առ-
քաց առաջ է գնում: Նորից է օդնութեան կան-
չում, նորից է անպատճախան մնում: Վեր-
ջապէս խեղճն ուժաթափ եղաւ, նստեց ձեան
վրաց: Նրա զլուխը թերուեց և ըիչ յետոյ
անօդնական ճամբորզը ընեց:

անօդնական ճամփորդիլ ըստ՝
Զիւնն իջնում էր նրա երեսին, հալչում և
շուր գտանալով՝ ցած էր զլորում: Քիչ ան-
ցնելուց յետո՝ այլևս չէր հալչում և մնում էր
նրա երեսին սառած: Բուքն օրօր ասաց ճաճ-
բորդին, սառնամանիքը քնացրեց, ձիւնը ճաճ-
կեց անօդնական երիտասարդին սպիտակ սա-
ւաճուի:

Առաւօտ նրա հարսը, եղոր կինը գնաց կո-
վերը կթելու: Դեռ մութը տիրում էր աշ-
խարհին: Եւ մինչդեռ պիւղացի կինը կովերն
էր կթում, նրանց դարձան էր տալիս, դուր-
սը լուսացաւ:

Վաղելով կանչեց ամուսնուն:

Մօտեցան, ձիւնը յետ տուին, — զինւորական հագուստով մի մարդ: Նայեցին գէմքին — ճանաչեցին — իրանց եղբայրն էր:

կաց եղաւ եղբայրը, ողբի ծախնը զցեց անբախտ հարսը:

— ԱՌԵ, եղբայր չան, երկու քայլ էր մնացել համանելու: Եղբօրդ տանն ապաստան էիր փնտռում, բայց հայրենի խրճթիդ առաջ, աղբի վրայ, անսպասելի կերպով ու մահ գտար: Բանից դուրս եկաւ, որ դիշերը մարդ ու կին լսել էին, թէ ինչպէս մէկը աղիողորմ ծայնով օգնութեան էր կանչում, բայց ծուլացել էին այն ցրտին անկողնից վեր կենալ և բուքբորանին տանից դուրս դալ:

Սիրելի ընթերց՞ղ, արդեօք քեզ էլ չէ պատահէլ լսել, թէ ինչպէս մէկը ճանապարհից մոլորուած, ծախն է տալիս, օգնութեան է կանչում:

ՉԷ որ մեր շուրջը շարունակ մարդիկ են կորչում, մէկո՞ նշմարտութեան ու արգարուե զինու մէջ է խեղդում, հարբեցողութեան միացնող ճահիճն է խրւում, և զրանք ամենը ըրն էլ շրում խեղդուղի պէս ծեռները պարցրաի տակ սառչողի պէս աղիողորմ օգնութիւն են խնդրում: Եւ որքան յաձախ է պատահում, որ ոչ ոք օգնութեան ժեսք չէ մեկնում նրանց,

և մեր նոյրուած եղբայրները կորչում են մեր գէմքի վրայ:

Մեր կեանքը մի մեծ, հսկալական մեքենայի է, բազմաթիւ անիւներ ունի, բաւական է, որ մարդը միքիչ անուշագիր վերաբերուի գէպի նա, միքիչ սխալուի և աշա անիւր կը կպչի փեծիպիչ, կը քաշի, մէջ կը ծգէ, ոտդ կը կատրէ, շիզ, կը քաշի, մէջ կը ծայրդէ, զլուխդ կը շախչախէ: Եւ երբ ծեռքդ կը շարդէ, ոտքն է կոտրւում, այդ գեռ մարդու ծեռքը, ոտքն է կոտրւում, այդ գեռ ոցինչ, մէ կերպ կարելի է բժշկել, մի կերպ օգնել:

Բայց եթէ կեանքը կանդամալուծէ, կալլանգակէ մարդու հոգին, երբ ամեն տեսակ դայթակղութիւնները, հրապուրները կը փչացնեն թուլ մարդուն, երբ մոլութիւնը, աւազակի նման կալանդակէ նրա սիրաը, կը կողպաէ նրանից արդարութիւնը, բարին — այդ ժամանակ բոլոր մարդիկ անցնում են ծօտից, առանց նայելու նրա վրայ, առանց որևէ ուշադրութիւն դարձնելու, աշխատում են: Որքան կարելի է շուշով հեռանալ նրանից: այն ինչ, չէնց այդ տեսակ մարդկանց պէտք է օգնել, եղբայրական սիրով տօգորուած՝ բնքուց ծեռք մեկնել:

Երբ որևէ պետութիւն պատերազմ է սկսում իր թշնամու գէմ, երբ մարդասիրութիւնն ու

Խաղաղութիւնը թագյնում են իրանց դէմքը
և սովարէղ է դալիս բանութիւնն ու սպա-
նութիւնը, երբ թափում է մարդկացին ան-
մեղ արիւնը, պատերազմի դաշտը բաղմաթիւ
իմբերով ող բմութեան քոյրեր ու բժիշկներ
են ուղ օրիում, մարմնի վերքերը բժշկելու, սպե-
ցանիք գնելու: Աչա մուսաց պետութիւնը
մեն կողմից օդնութեան ծեռք են մեկնում ըլը-
աժկելու պատերազմում ընկած զինորներին,
անխափ կերպով՝ սուս զինուոր է նաև թէ

Այնինչ, գեռ այդ պատերազմը չը սկսած,
մեղ ծօս արդէն պատերազմ էր, ու թէ մեղ-
ականու այլ մեր քաղաքներում: Այդ պա-
տերազմը շարունակում է և այժմ — կռւում
բարին ու չորր, լոյսն ու խաւարը, տղի-
կացնում ամբողջ զիւղեր է խեղդում, սորր-
պովդին, գորբեցողութիւնը վարակում է ժո-
րարուականացնում են հասարակութիւնը:

Եւ մեր փոքր եղբայրը կեանքի հարուած-
ների տակ անօգնական է թողնուած: Նո սպա-
սում է, անհամբերութեամբ սպասում է, թէ
երբ օդնութեան ծեռք կը մեկնէ իր ողորմած
եղբայրը, ողորմած քոյրը, բարի սամարացին,

Երբ կը յագեցնեն, նրա հոգեկան ծարաւը, սի-
րոյ անուշահոտ իւղով երբ կը փափկացնեն
նրա վշտերը, երբ կը բժշկեն նրա հիւանդու-
թիւնները:

Եւ այդ փոքր, օգնութեան կարօտ կրասեր
եղբայրը ոչ թէ մեզանից հեռու, անյատ մի
երկրում է, ոչ ամեն աեղ է, մեր շուրջն է,
մեր տան շէմքում. մենք միշտ լսում ենք նրա
մեր յուսուհատ և աղիողորմ ձայնը: Ատկայն բանն
այն է, որ չենք ուղղում մեր տաք անկողնից
միր կենալ և բուք-բորանին դուրս գալ մեր
անից:

ԲԱՐԻ ԶԵՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Պէտերբուրգի մի աեկեղեցու ժխականները
սրանից երկու տարի առաջ հարբեցողութեան
գէմ կռւելու նպատակով, մի ընկերութիւն
կաղմեցին: Իր հօտին նուիրուած քահանակի
եռանդուն և սրաալի քարոզների շնորհւ ըն-
կերութիւնն սկսեց արագութեամբ աճել: Տար-
ւայ վերջին անդամների թիւը հազարից ան-
ցաւ:

Անդամների մէջ աւելի սերտ յարաբերու-
թիւն մտցնելու կարիք զգացուեց: Մաքերի

կենդանի փոխանակութեան, իրանց կարիք-ները քննելու պահանջ առաջ եկաւ: Պէտք էր հաւաքուելու տեղի մասին մտածել: Ընկերութեան անդամներն իրանց սեփական բոյն շինելու խնդիրը շատ մօտ ընդունեցին իրանց սրաին և եռանդուն կերպով ժողովարարութիւն բաց արին նիւթական միջոցներ ձեռքբերելու: Անդամների մեծ մասը բանւորներ են, չբաւոր մարդիկ, որոնց համար մի-երկու կոպէկն էլ ահագին նշանակութիւն ունի: Չնայելով այդ հանդամանքներին, կարճ ժամանակայ ընթացքում, կոպէկներով հազար բուբուց աւելի հաւաքուեց: Քահանան զիմեց նաև կողմնակի բարի մարդկանց: Երկու-երեք ամսում գումարը երեք հազար բուբուի համար է եթ ձեռնարկեցին սեփական տան հիմնարկութեանը և մի քանի ամսից արդէն ամէն ինչ պատրաստ էր. շինութիւնը թէե շքեղ չէր, բայց նրանք շքեղութիւն չէին էլ ուղում: Շինութեան մէջ, մի մեծ դաշլիճում անդամները պէտք է ժողովներ ունենան, պէտք է զրբեր կարդան ընդհանուրի համար, մոդական լապաերով պատկերներ ցոյց տան, կրօնական-բարոյական զրոյցներ կաղմակերպեն, հոգեոր երգեր երգեն, պէտք է մտքերի փոխա-

դարձ շփումն լինի, աէր-հօր զեկավարութեամբ վիճաբանութիւններ կատարուեն:

Ուրիշ երկու սենեակում հիւսնդների ընդունելութիւն է լինում. մէկում՝ կանանց, միւնելութիւն աղամարդկանց: Մի բժիշկ և բժշկուհի սում աղամարդկանցութիւն յալանեցին կատարեալ գատրասասակամութիւն յալանեցին ծրիաբար ծառայել իրանց չքաւոր եղբայրներին ու քոյրերին:

Շինութեան մի ալ մասում կիրակնօրեալ գալրոցն է: Բացի այդ, երբ գալրոցում պարապ-մունքներ չեն լինի, ուսուցիչներն ամեն մի ցանկացողներին երգեցողութիւն կը սովորեց-նեն, իսկ վարժուհիները կանանց և աղջիկնե-րին կար ու ծե, երեխաներին մեծացնելու ամսում գումարը երեք հազար բուբուական հիմունքները, և վերջապէս երեխա-ների համար էլ առանձին ընթերցանութիւն-ներ կը կազմակերպուին և պատկերներ ցոյց կը արուին:

Մի խօսքով այդ շինութիւնը մի բոպէ ան-դամ գատարկ չի մնայ: Անքնդհատ տեղի կու-նենայ կենդանի աշխատանքը, ամեն բոպէ մի աշխատատորին միւսը կը փոխարինէ և մաս-մաս կը կառուցուի բարի շինութիւնը, բար-բարի վրայ գնելով, առաջ կը դայ եղբայ-րական սիրով օրհնուած մեծ գործը:

Ուշադրութեան արժանին այն է, որ այդ

մեծ գործն սկսուել է միայն քառասուն րուր-
լի առձեռն դրամով, որ մնացել էր շինութիւ-
նը կառուցանելուց յետով:

Այդ իսկ վատահութեամբ բանւորները ցոյց
են առլիս, որ հաւատում են սիրոյ յաղթա-
կան ոլժին: Նրանք հաւատում են, որ եթէ
ներ կը շարժէ, ապա ուրեմն, եղբայրական
համերաշխութեան սէրն էլ աւաղից լեռներ կը
ստեղծէ:

Եւ ալգափիսի հաւատով նրանք, իսկ որ, բա-
րութեան լեռներ կը բարձրացնեն:

Տէր, մեղ ոյժ ներշնչիր, որ կարողանանք
ամեն տեղ ալգափիսի հիմնարկութիւններ առաջ
բերել, որ մեր ամբողջ հայրենիքը ճածկէ
ալգափիսի աշխատանքի կենդրոն՝ հիմնարկու-
թիւնների ցանցով:

ԱԻՐՈՒԹԵԼԻ ԱՆԿԻՒՆԸ

Աւատահեցի մի ժանոթիս, որ նոր էր վերա-
դարձել զիւզական խուլ անկիւնից:

— Գիւղում վատ է, ասում էր նա, մարդ
չի կարող անանեղ ապրել: Մանր է զիւզացուն
տեսնելլ: Մի աեսակ ճնշում ես զգում, երբ

մտածում ես ժողովրդի ապագայի մասին: Նո-
գիս տանջուեց, ուժասպա եղաւ ժողովրդի
թշուառութեան տեսրից: Կարծես անյօյ հի-
ւանդի մօտ էի. կակծում, ափսոսում եմ, սիր-
ութս արիւնով է լցում, բայց ոչ մի բանով չեմ
կարող օգնել: Ամեն տեղ կարիքը խեղդող է,
ուր որ նայես, ամեն տեղ պակասութիւն ու-
չքաւորութիւն է ափրում: Իսկ զիւսաւորը՝ խա-
ւար, ասրամիելի խաւար է, մարդու ձեռքերը
ծալւում են, չդիտես՝ ի՞նչ անես:

— Ցաւն էլ հենց ալդ է, տում եմ ես, որ
մենք չը գիտենք, թէ ի՞նչ անենք: Այնինչ հար-
կաւոր է զիւտենալ, հարկաւոր է գործի հա-
մար ծեռքերը բաց անել, հարկաւոր է խելա-
ցի, տոկուն, յամառ աշխատանքի վրայ բա-
նեցնել:

Ես կուգէի, որ ամենքը կարդացն Խօրին-
զօնի յալանի պատմութիւնը: Այդ պատմու-
թեան մէջ հեղինակը կամեցել է հաստկաւոր
մարդկանց մի իմաստուն խրատ ապի: Նա իր
հերոսին՝ Խօրինզօնին ամենավատ պայմանների
մէջ է գրել. նաւը խրատակուելուց յետոյ, նա
մի անբնակ կզղի է ըսկնում և ապա մենա-
նակ, ապրեցաարի եռանդով աշխատում է իր
կեանքը բարելաւելու: Խօրինզօնը ուժեղ հո-
գու տէր, խելօր, առկուն մի երիտասարդ էր

և անլնդհատ աշխատանքով կարողացաւ անապատը բուրաստան դարձնել: Այդ օրինակից մենք տեսնում ենք, որ ամենայիշ ընկած գիւղում, ամենաթշուառ զրութեան մէջ զըտնող ժողովրդի մէջ ապրող չունեոր աշխատաւորը, դարձայած մարդը, յամենայն դէպրս, աւելի լաւ պայմաններով է շրջապատուած, աւելի հեշտ գործ ունի տնելու, քան Ռոբինզոնը, որ նաւը խորտակուելուց յետոյ անբնակ կղզին էր ընկեր:

Պէտք է աշխատել:

Մեզ պատող մտուխուղը որքան թանձր է լինում, այնքան սաստիացնում ենք ճրագիլոյսը դուրսը որքան ցուրտ է լինում, վառարանի այնքան աւելի ենք տաքացնում: Այդպէս և գիւղում: Թող լինի խաւար և անպատ: Մենք կը լինենք նրա Ռոբինզոնները:

Գիւղերում, ժողովրդի մէջ խաւար, չար ոյժերը դարերով են աշխատել: այդ պատճառով էլ այնտեղ մութն է թագաւորում: Թող լուսաւոր ոյժերը գիւղ գնան, գործեն և ժողովուրդը կը լուսաւորուի:

Լուցէք, թէ ի՞նչ պատմեց ինձ մի ընկերս, որ ամառը մի գիւղում էր անցկացրել:

Երեսուն տարուց աւելի է այդ գիւղում ժողովրդական զպրոց կայ: Բարերախտաբար հէնց

առաջին տարուց լաւ ուսուցիչ պատահեց, որն առանց փոխուելու ժառայում է մինչև այժմ: Բարի ժառը բարի պառեղ տուեց: —

Երեսուն տարուայ ընթացքում այդ գիւղում առաջ եկաւ մի ամբողջ նոր սերունդ: Սրանք արդէն խելօք, լուրջ, հասարակական կարիքներին հեռատես հոգատարութեամբ վերաբերող մարդիկ են: Հասարակական պաշտօնների համար ընարուած մարդիկ մէկը միւսից արժանաւոր էն: գատաւորները, տանուտերը, զրագիրը, ամենքը օրինակելի են: Մարդու սիրության հանգստանում է, երբ տեսնում է գիւղական գատարանը: — այլաեղ ոչ մի գատարկ, աւելորդ խօսակցութիւն չի լինում: Խսկոյն երեսում է, որ մարդիկ հասկացել են, որ ամենից առաջ հարկաւոր է ճշմարտութիւնը, կենդանի, յաւիտենական ճշմարտութիւնը, աստուածալին ճշմարտութիւնը գտնել և ոչ թէ թղթեր խզբելով զբաղրուել:

Դէ, իհարկէ, Պէտօ, Գիքօն քո առաջ մեղաւոր է, մարդկային օրէնքով՝ մեղանչել է, զաւոր եթէ... թէ որ... խղճով գատենք, Ասբայց եթէ... թէ որ... խղճով գատենք, Աստուածաներս չը մոռանանք, դու պէտք է նրան ներես:

— հաշտուեցէք, հաշտուեցէք, սիրով ասում են գատաւորները, և մէկ էլ տեսար՝ Պէտ-

տօն ու Գիքօն, որ իրար թշնամի էին, արդէն
բարեկամներ դարձան:

Գիւղի ներքի կազմակերպութիւնը մանա-
ւանդ տւելի լաւ առաջ գնաց, երբ գիւղի զրա-
գիր ու տանուտեր դարձան Յակոբն ու Պօ-
ղոսը:

Գրագիր Յակոբն ինքը այդ գիւղացի էր,
աղնիւ ու լայն սրախ տէր մի մարդ: Ակզրում
ուղում էր ուսուցիչ զառնալ, բայց չը յաշող-
ւեց, ուստի և զրագրութեան մատւ: Նա բա-
ւական զարգացած մի մարդ էր, և սիրում էր
գիւղացիների համար զիրք կարգալ ու բացա-
արել:

Մի անգում նա իր սովորութեան համեմատ,
մի զիրք էր կարգում: Ունկնդիրները կարգա-
ցածին շատ հաւանացին: Շատերի աչքին ար-
տասուր երեաց: Ընթերցանութիւնը վերչա-
նալուց յետոյ, խօսակցութիւն սկսուց: Խօ-
սում էին իրանց տպիտութեան, գիւղական
կեանքի բիրտ, կոպիտ լինելու մասին, նրա մէջ
տեղի ունեցող անարդարութիւններն էին պա-
խարակում:

Այս, եթէ ալսպիսի խօսակցութիւններ մի-
քիչ շուտ-շուտ լինին, կարելի է մեր զիւղե-
րում կեանքն այսպէս չը գնար, ասում էին
գիւղացիք:

Գրագիրն ուրախացաւ գիւղացիների այս
տրամադրութիւնից, և առաջարկեց գիւղում
ընթերցարան հիմնել: Այդ առաջարկութիւնը
հասարակութեան հաւանութիւնը դատաւ: Ակսե-
ցին մտածել, թէ գործն ի՞նչպէս վլուխ բերեն:

Բանից պարզուեց, որ արդէն դոյութիւն
ունի բարձրագոյն հաստատուած մի օրէնք
թուի մայիսի 15-ին, որով կարելի է
գիւղերում ընթերցարան բաց անել:

Գիւղական ժողովում համախօսական կազմե-
ցին և ուղարկեցին նահանգապետի հաստա-
տութեանը:

Այժմ երկրորդ տարին է, որ ընթերցարանն
արդէն գոյութիւն ունի, և ալղբան ժամանա-
կամիջոցում գիւղացիք հարիւրաւոր զըքեր են
կարգացել և նրանց առաջ նոր աշխարհ, մե-
ծամեծ հորիզոններ են բացուել:

Կարծես տանդ մէջ նոր պատուհաններ
ես բացել, կամ անտնցանելի, մութ անտառում
ուղիներ հարթել, — ալղբան լոյս է աւելա-
ցել: Մաքերս էլ են պարզուել, սրտերս էլ լու-
սաւորուել, խօսում էին իրանք իրանց զիւ-
ղացիք:

Ակսեցին նոր ձեռվ մտածել ու դժալ, նոր
տեսակ նայել կեանքին:

Գիւղը ճանապարհի վրայ էր: Ամեն օր աղ-

բատներն ու թափառաշրջիկները, անտուն — անտէր անցւորականներն անպակաս էին այդ գիւղից: Ինչքան էլ որ ողորմութիւն էին տալիս, կերակրում կարօտեալներին, բայց ոչինչ էր դուրս գալիս. դարձեալ փողոցները լիքն էին թափառաշրջիկներով:

— Աղքատին «ի սէր Քրիստոսի» ես օգնում, բայց բանից դուրս է գալիս, որ տուածդ «ի սէր արաղի» է դառնում, խօսում էին զիւղացիք, տեսնելով, թէ ինչպէս մուրացկանները բոլոր ստացածը զինետներում են վատնում:

— Քան թէ սրանց չոկ-չոկ ողորմութիւն տանք, աւելի լաւ է բոլոր օտար մուրացկանների համար մի խթճիթ շինենք, թող այնտեղ ժամանակաւոր ապաստան գտնեն, իսկ մեր զիւղացի մուրացկաններին՝ ամեն մէկս մի հոգու վերջնենք մեր տները, մի հոգին խօմ մեզ չէ կարող աղքատացնել, ինչպէս մենք ենք ապրում, այնպէս էլ նրանք թող մեզ հետ եօլալ գնան:

ինչպէս մտածեցին, այնպէս էլ արին:

Վարչութիւնն առաջարկեց, որ մուրացկանների համար մի հոգաբարձութիւն կաղմէն, ինչպէս ասուած է պետական օրէնքների մէջ, բայց զիւղացիք պատասխաննեցին. —

— Մէնք արդէն օրէնք ունինք, մէնք քրիս-

տոնեալ ենք, և մեր Քրիստոսը մեզ ասել է «Քաղցածին կերակրիր, աղքատին ողորմիր, մերկին հազքրո՞ւ» ահա այդ օրէնքով էլ կը կավալրուինք:

Սակայն, երբ գործը լայնացաւ, միքանի հոգաբարձուներ ընարեցին, որոնք մօտ ութիր գիւղիւր բուրլի փողով մի ապաստանարան հիմնեցին: Եւ այդ գիւղում ոչ մի անտէր որր, ոչ մի անտուն մուրացիկ, թափառաշրջիկ չկար:

Բայց այդ տանուտէրի առաջարկութեամբ գիւղում մի շարք օդտակար հիմնարկութիւններ բացուեցին. — զանազան տեսակ լաւ սերմերի ու երկրազործական մեքենաների պահեստ, զիւղական փոխատու ընկերութիւն, այսինքն՝ հաւաքեցին մի որոշ գումար, որից փող էին պարաբ տալիս գիւղացիներին փոքր տոկոսով, որպէսզի կարիքից ստիլուած զիւղացիները վաշխառուների ճանկը չընկնին և ահաղին տոկոսներ տան: Միենոյն ժամանակ նաև ընկերութեան գանձարանն ընդունում էր զիւղացիների՝ նեղ օրուալ համար յետ ձգած փողերը և տոկոս վճարում:

Առաջ հիմնեցին հրդեհաշէջ ընկերութիւն, որը գիւղում հրդեհ եղած դէպքում, օգնութեան էր հասնում և հանդցնում:

Վերջապէս՝ մի մեծ «ժողովրդական տուն»

Հիմնեցին, որտեղ կար թէլարան, ընթէրցարան,
երգերի, թատրոնական ներկայացումների և
ժողովրդական ընթերցանութիւնների համար
մեծ գոտիներ:

Այս բոլորը զիւղացիք հիմնում էին առանց
տրաունչի, լաւ հասկանալով, որ ահազին օ-
գուտ պէտքէ սուանան ոչ միայն բարոյական,
այլև նիւթական, բանի որ զբանով վերանում
էր հարբեցողութիւնը, վաշխառուական հա-
րստահարութիւնները, կրծատում էին հրդեհ-
ները և այն,

Հարբեցողութեան դէմ կռուելու համար գիւղացիները մի տռանձին ընկերութիւն հիմնեցին, որի անդամները խօսք էին տալիս, որ ամենևին խմբչք չեն դործածի: Այդ ընկերութիւնն էլ մի գեղեցիկ շինութիւն կառուցեց, որտեղ ամեն տեսակ օդտակար զբաղմունքներ կալին, գիւղացիներին հարբեցողութիւնից յետ կանգնեցնելու համար:

Սլովակիա շաբաթը երեք անգամ ժողովրդական ընթերցանութիւն էր լինում, քահանան կարգում էր, քարոզ ասում, երգեցիկ խումբ էին կազմել, որը ժողովրդական ու հայրենասիրական երգեր էր երգում, ոտանաւորներ էին կարգացնում: Նմանօրինակ օդատակար զուարժութիւնները աշազին յաջողութիւն ունեցան: Յանախսորդներն

այնքան էին ոգեստում, հիանում, այնքան լաւ-
տպաւորութիւն էին ստանում, նրանց մէջ այն-
պիսի ձաքուր ու սուրբ զգացմունքներ էին
դարթնում, որ երեխ ձարտաքաղաքների շատ
հարուստ բնակիչներ նրանց կը նախանձէին:
Հարուստ բնակիչներ նրանց կը նախանձէին:

Այդ զիւղի ամենավերջին սորուլութեան ռողական ընկերութիւնը և հասարակական արտն էր:

արտն էր:
Սմեն մի ապրանք զնելիս, փոխառակ մաս-
նաւոր խանութպանին թանկ զներ վճարելու՝
գիւղացիք ծտածեցին, որ աւելի լաւ է բաց
անեն իրանց սեփական, հասարակական խա-
նութը, որտեղից և՝ աւելի էժան կը զնեն ա-
մեն ինչ և՝ աւելի լաւ ապրանք կառնեն և՝
խանութպանի փոխարէն գիւղի հասարակու-
թիւնը կօդառուի:

Մի անդամ զիւղական ժողովում զբագլիքն ասում է.

— զը՞, զարկաններ, ի՞նչ կառէք, միքին ա-
լազ վ խմբնը:

Այս բանը հանեթով ասելուց յստոց, զրա-
գիւր բացատրեց իր խօսքը. զիւղի սահման-
սերում մի անպէտք ճահիճ կար, դարշահոս
շրով ժաժկուած: Յակոբն առաջարկեց այդ
ճահիճը չորացնել և ակզր հասարակական արտ
դարձնել: Միքանի օր չանցած, դարշահոս

ճահճի տեղը մի արձակ դաշտ էր, որը հետեւ տարին գիւղի արտք դարձաւ:

Բոլոր այս օդտակար ու խելացի ձեռնարկութիւնները հարեանների բարի նախանձի առարկան դարձան, և նրանք էլ քիչ-քիչ սկսեցին սրանց օրինակին հետեւ:

Եւ այսպիսով յետ ընկած գիւղը դարձաւ
մի օրհնուած վայր, որ իր շուրջը լոյս էր
տարածում:

ხუარეს, აյგვან ლათ ფირბერებ ყოლებ ებებ-
ლოւ համար ահազին գժուարութիւնների պէտք
էր յաղթել: Եւ զրաდիրն ու տանուակը շատ
դառնութիւններ կրեցին, շատ տանջուեցին և
դեռ էլի շատ ու շատ կը տանջուին ու չար-
չարուին:

Տանուտէրն ու դրազիրը յաճախ մտածում
էին, — է՛հ, եթէ լիրաւի մեր արած գործերը
փոքր բաներ են, զոնէ անշիմն, դատարկ, ա-
նօգուտ չեն: Զէ՞ որ միանգամից չի շինւում,
այլ մաս-մաս, քար քարի վրայ դնելով: Դէ՛հ,
մենք էլ մեր քարերն ենք դնում, իսկ եթէ
դրանք փոքր են, ոչի՞նչ փոքր քարերով էլ կա-
րելի է ամբողջ պատ կազմել, միայն թէ շատ
լինին: Մեղուն ծաղիկներից հիւթեր հաւաքե-
լով՝ փթերով մեղք է շինում. մենք էլ թող
մեր դիւղի մեղուները լինինք: Գիւղական կեան.

բի դառն ծովում մենք քիչ կլ է մեղք կը
պատրաստենք, բարու և լոյսի մի փոքրիկ
կողի կը բարձրացնենք:

զզզի զր բարօրացաւէ.
Ուրեմն աշխատել է հարկաւոր և ոչ թէ
ծեռքերը ծալած նստել: Սշխատել, աշխատել:

Երբ մենք յետ ընկած, երկիւղալի, զատ առ
նապարհով մեր երեխաների հետ մի տեղ ենք
դնում, երբ ճանապարհն անանցանելի ցեխի
հաստ շերտով է ժամանակած, երբ երկնքից ա-
նընդհատ անձրև է տեղում, երբ կողքերից
յուրաքանչի է փիզում — խօմ չենք կարող սալլը
երեխաներով ճանապարհին թողնել ու հեռա-
նալ: Ոչ ինքներս կը լծուենք, կը զօռենք սայ-
լը ցեխից հանելու և լաւ ճանապարհը գուրս
բերելու համար: Նոյն է և զիւղն իր կեանքի
վատ կողմերով, մեր կրտսեր եղբայրներով:

Միթէ կարելի է նրանց անխնամ թողնել:

Այս պատմութեան մէջ լիշուած քաշանան,
գրազիրը, տանուաէրը լծուեցին զիւզական
խաւար կեանքի ծանրաշարժ սալլին, երկար
տարիներ իրանց համաղիւզացիներին դէպի լու-
սը, դէպի լաւ ճանապարհը քաշեցին, շատ ա-
նախորժութիւններ ու գժբախտութիւններ կրե-
ցին, բայց ի վերջոյ սալլն իր տեղը հասցըրին:
Գիւզացիներին խելացի, առույգ կեանք տուին:
Դէշ մենք էլ մեր զիւզերը քաշենք դէպի

այդ լուսաւոր ռւղին: Ոչ թէ միանդամից, ոչ
թէ յանկարծ, ոչ թէ թաշելով, այլ՝ քիչ-քիչ
բայլ-առ բայլ, և Աստուած կտայ՝ մեր խա-
ւար հայրենիքը կը հասցնենք գիտութեան, ա-
զատութեան և Աստուածային ճշմարտութեան
հաստատ ճանապարհը:

Նարժուենք, Աստուած մեղ հետ, ճանա-
պարհը հեռու է, ուղին՝ ծանր, բեռը՝ մէջ,
իսկ ժամանակը՝ քիչ:
Դէ՛չ, առաջ շարժուեցէ՛ք!

Ս Կ Ի Զ Բ Բ

Յիսուսը քարողելով շրջում էր Հրէաստանի
բոլոր քաղաքներն ու գիւղերը: Ժողովուրդն
ահապին բազմութեամբ շրջապատում էր նրան
և լսում: Երուսաղէմի տաճարի գառթում, ա-
ճապատ լերան գագաթին, մշակած դաշտե-
րում, լճի ափին — ամեն աեղ հարիւրաւոր
ու հազարաւոր մարդիկ ագահութեամբ լսում
էին նրա ամեն մի խօսքը:

Կեանքի անարդարութիւնից մարդիկ ձան-
ձրացել էին: Ինչպէս հեղծուցիչ սհնեակից մար-
դի վազում է թարմ ու մաքուր օդին, այն-
պէս էլ արդարութիւն ամենողները վազում

էին դէպի նրա խօսքերը: Եւ այդ խօսքերն
այնքան սէր էին շնչում, այնքան հասկանալի
լեզով էին պարզում ժողովրդին անարդարու-
թիւնը, նոր կեանքի յուրաով այնպիսի ուրա-
խութիւն էին ներշնչում նրան, որ ժողովուր-
դի հացից էլ գերադաս էր համարում այդ
խօսքերը:

Դպիրներն ու փարիսեցիները ժողովրդին
արհանձարհում էին. —

Այս ժողովուրդն անիծուած է, որովհետեւ
օրէնք չը զիտէ, ասում էին նրանք:

Փարիսեցիները ժողովրդին կոպիտ, բիրտ և
Աստուծոյ խօսքը հասկանալու անընդունակ
էին համարում, և այդ պատճառով էլ նրան
ոչինչ չէին սովորեցնում:

Իսկ Փրկիչը, տեսնելով իր ազահ ունկնդիր-
ներին, ասում էր, որ մարդիկ ճշմարտութեան
ու արդարութեան ծարաւի են, բայց չգիտեն,
թէ նրաեղից ծեռք բերեն: Փրկիչն ասում էր,
որ ժողովրդին մօտենալու ձեռք պէտք է իմա-
նալ, որ ժողովուրդը տգէտ ու կոպիտ է, ո-
րովհետեւ ոչ ոք նրան չի սովորեցրել: Ժողո-
րովհետեւ կիւանդութիւնների մէջ է ընկդմուել,
վուրզը հիւանդութիւնների մէջ է ընկդմուել,
որովհետեւ անտեր է մնացել: Ոչ ոք մարդկանց
Աստուծոյ խօսքը չի քարոզում, ոչ ոք նրանց
մասին չի հոգում, և այդ պատճառով նրանք

վայրենացել են և անհովիւ ոչխարի պէս
թափառում են:

Բայց ահա լսուեց Քրիստոսի ձայնը. քաղաք-
ներում ու զիւղերում տարածուեց նրա խօս-
քը երկնային թագաւորութեան մասին և ժո-
ղովուրդը վազեց դէպի ուսուցիչը:

Ամբով խմբւում է նրա շուրջ, տասնեակ
վերստեր են անցնում մարդիկ, որ լսեն նրան.
Նրա քարողի ժամանակ մոռանում են հացը,
շուրջը:

Այս բոլորը տեսնելով՝ Յիսուս խղճում էր ամ-
բովին և ասում:

— Հունձն առատ է, հնադողներ քիչ! Ազո-
թեցէք հնձի Տիրոջը, որպէսզի հնադողներ ու-
ղարկէ:

Եւ մինչեռ կդան հնադողները, չի կարելի
թոյլ տալ, որ Աստուծոյ ցորենը հասկերից
թափուի. պէտք է հաւաքել նրան:

Այս պատճառով, Յիսուս կանչում է իր
տասներկու աշակերտներին, ուղարկում է նր-
անց քարողելու այս պատուերով:

— Ճանապարհին կռապաշաների մօտ չը զլ-
նաք, սամարացիների քաղաքներն էլ չը մրտ-
ների տան կորած ոչխարների մօտ: Գնացէք,

քարողեցէք, որ Աստուծոյ արքայութիւնը մօ-
տեցէլ է:

Յետոյ արդէն, իր աշակերտներին վերջնա-
կան հրաժեշտ տալիս, Յիսուսը պէտք է ասէր:

— Գնացէք, քարողեցէք օսար ժողովրդնե-
րին, սովորեցրէք նրանց այն ամենը, որ ես ձեզ
հրամացեցի:

Ուրեմն, ինչպէս տեսնում ենք, Քրիստոս
սկզբում իր աշակերտների քարողութեան տե-
սակը սահմանափակում է — «Կռապաշաների մօտ
չը գնաք, սամարացիների քաղաքները չը մրտ-
նէք, այլ գնացէք միայն իսրայէլի կորած ոչ-
խարների մօտ»:

Որովհետեւ Աստուծոյ խօսքը ամբողջ աշ-
խարհում քարողելը շատ մեծ գործ է և ամեն
յատկութիւններ և երկար պատրաստու-
կան յատկութիւններ է պահպանակու-
թիւն է պահանջում: Այդտեղ միայն խօսքը
բաւական է: Անհրաժեշտ է անձնուրաց սէր,
անսովոր հեղութիւն և փրկչի քարողները դոր-
ծնականապէս կատարելու, իր օրինակով ցոյց
տալու ընդունակութիւնը: Զար սիրտը միայն
անկեղծ սիրով կարելի է փափկեցնել: Հակա-
ռակ դէպում, սիրոյ խօսքերն առանց համա-
ռակ դէպում, սիրոյ խօսքերն առանց համա-
ռակ պատասխան դործերի, մարդկանց միայն կը
պատասխան դործերի, մարդկանց միայն կը
կատաղեցնեն ու կը գրգռեն, կը չարացնեն,

ինչպէս որ եղին կատաղեցնում է կարմիր

Սրեելցի մի իմաստուն Ուսուցչի մօտ եկաւ
իր աշակերաներից մէկը և թուլտութիւն
խնդրեց, որ գնայ կռապաշտներին կեանքի նոր
ուսմունքը բարողէ:

— Այն ժամանակ, երբ մտածում էս մարդկանց նոր կեանքի համար պատրաստել, արդեօք ինքը պատրաստ էս ։

— **Φορδίβ'ρ**, φωρηταψέω, ίσινωρχοιθεωδρ
պատասխանեց աշակերտ:

— Դու մտաղիք ես անծանօթ մարդկանց
մօտ գնալ: Նրանց համար դու եկւոր օտարա-
կան ես. նրանք քեզ մեծ թշնամութեամբ կը
դիմաւորեն: Նրանք բիրտ ու դաժան մտրդիկ
են, քո տաճ նշմարտութեան ու սիրոյ խօս-
քերը չեն հտականալ: Նրանք կը ծաղրեն քո
սնկեղծ ու սրաւլի խօսքերը: Այդ զէպքում
ու ի՞նչպէս կը նայես նրանց, ի՞նչ կը մտա-
հես նրանց մասին, երբ քո սիրոյ կոչին նշանը
որհամարհտական ծաղրով կը պատասխանէին.

— Ես գետի նրանց շնորհապարտ սիրով կը
երտրերուեմ, ասաց աշակերտը. կը մտածեմ,
որ նրանք շատ բարի մարդիկ են, որովհետև,
թէ բարի Ալինեին, կարող էին հնձ հայշոյել,
ինինչ նրանք միայն ծաղրում են:

— Խակ Եթէ նրանք քո քարոզների համար
սկսեն նաև հայհոյել քեզ, այդ ժամանակ ի՞նչ
կը մտածես:

— կը մտածեմ, թէ որքան բարի մարզիկ
են գրանք, քանի որ ինձ միայն հայհոյում են,
այնինչ, եթէ կամենալին, կարող էին նաև
ծեծել:

— Այդ էլ կարող է պատահել. ասենք թէ
առանց նրանց հայՀոյանքին ուշադրութիւն
դարձելու, դու շարունակես քո գործի, և նր-
անք կատաղեն ու ծեծեն, ծեծեն փախերով,
քարերով։ Այդ դէպքում ի՞նչպէս կը վերաբե-
րուես դէպի նրանց։

— Ես դարձեալ նրանցից գոհ կլինեմ, որով-
հետեւ կարող էին ինձ նիզակներով ժակծըկել
և սրերով կարատել, կարող էին, վերջապէս,
սպանել, այնինչ միայն ժեծում են:

— Այդ էլ աչքի առաջ ունեցիր: Պատրաստ
եղիր ծանր վերը եր և սոլիսկ մահ ընդունե-
լու: Մարդկանց չարութիւնը սահման չունի:
Մարդու աչքը որքան հիւանդաս լինի, նրա
համար այնքան անդուրեկան է արեի լոյսը
տեսնելը: Արդարասէր մեծ մարդկանցից շա-
տերն են իրանց արիւնը թափել, դեպի մար-
դիկն ունեցած մաքուր սիրոյ համար մահ են
ընդունել: Դու ևս հեշտութեամբ կարող ես նոյն

զիճակին ենթարկուել: Ի՞նչ կասես այն ժամանակ, երբ սուրը դիմիդ վերելը շողջողայ:

— Ես շնորհակալութեամբ կը բացատրեմ հայեացքս դէպի երկինք: «Աստուած, կասեմ ես, Դու ինձ, անարժանիս քեզ մօտ ես կանչում: Մեծ և բարի ես Դու, Տէ՛ր, ցոյց տուր Քո ողորմութիւնն այս մարդկանց: Թող իմ արիւնը, որ թափւում է այստեղ, Քո ճշմարտութեան համար՝ մարդկանց սրտերում սիրոյ և արդարութեան սերմը լինի»:

Վարդապետը փաթաթուեց իր աշակերտին և ասաց:

— Գնա՞ նոր կեանքի համար ինքդ պատրաստ ես և ուրիշներին էլ կարող ևս պատրաստել: Մարդկանց սրտերում ինչ տեսակ սառուց էլ որ լինի, սէրը արեի նման կը հալեցնէ նրան:

Երբ Քրիստոս իր աշակերտներին ուղարկում էր քարողելու, նրանք գեռ ևս չունեին այդ խառիսխանները. չունեին ինքնամոռաց սիրով և կատարեալ հեղութեամբ իրանց ուսուցի խօսքերը ցոփակեաց կուտաշտներին և թշնամի սամարացիներին քարողելու այդպիսի պատրաստակամութիւնը:

Երբ արել ծագում է, միանդամից չի լուսաւորում աշխարհը: Առաջ զիպչում է լիո-

ների կատարներին և լեռոյ արդէն ձորերն ու խորխորածները:

Այսպէս և Քրիստոսի լոյսը աստիճանաբար էր լուսաւորում առաքեալների սիրով, նրանց հոգու բոլոր ծալքերը:

Իր խօսակցութիւնների ժամանակ Յիսուսը շատ անգամ ընդհատառ էր նրանց և խրաշատ անգամ յանձնալի իրար հետ աւատում: Առաքեալները յանձնալի իրար հետ աւատում էին, գութեան մասին էին վիճում, հարցնում էին, թէ ինչ վարձատրութիւն պէտք է ստանան այն բանի համար, որ թողել են ամեն ինչ և հետեւ Յիսուսին: Նաև անգամ բարկութիւնից հետեւ Յիսուսին: Նաև անգամ բարկութիւնից հետեւ Յիսուսին, ուղում էին աղօթել, որ սամարացիները կրակով ալրուին այն բանի համար, որ նրանց չթողին իրանց գիւղից անցնեմար, որ նրանց չթողին իրանց գիւղից անցնելու, չէին հասկանում, որ մարդկանց փրկելու պէտք է տանչուել, և ասում էին համար պէտք է տանչուել, պէտք է:

Փրկչին:

— Տէ՛ր, այդ մի անի՛ր, խղճա Քեզ:

Այդ խոկ պատճառով Յիսուսը սահմանաւորում էր նրանց քարոզութեան տեղերը, փակում էր նրանց քարոզութիւնների մօտ և ասելով:

— Ճանապարհին կռապաշտների մօտ չը գնաք և սամարացիների քաղաքը չը մտնէք: Խուլ մարդու հետ խօսելու համար պէտք է

յատկապէս բարձր ձայն ունենաս: Ծանր վէրս
քերն առանց ցաւ պատճառելու բժշկելու հա-
մար, պէտք է սիրով տողորուած լինել և փա-
փուկ, քնքով ձեռքեր ունենալ:

Առաքեալները սկզբում անընդունակ էին
այդ բանին:

Նրանց խօսքերի ու վարմունքների մէջ խրս-
տութիւն ու բարկացկոտութիւն կար:

Այդ յատկութիւնները ոչ թէ կը զրաւէին,
այլ կը հեռացնեն կռապաշաներին ու սամա-
րացիներին նոր ուսմունքից:

Ուրիշ էին հօրացելացիները:

Այստեղ հողն արդէն մշակուած էր, ուղին
հարթ, քարերից ազատ: Այստեղ հողը պա-
րարտ էր և ցանքսի էր սպասում:

Իսրայելացիները հոգեկան քաղցից տան-
չում էին: Ամբոխն անհովիւ ոչխարի նման
թափառում է, այս ու այն կողմն է ընկնում,
ուսուցիչ է որոնում, որ նրանց կեանքի ճա-
նապարհը սովորեցնէ:

Ինչպէս երաշակից ցամաքած հողը ծարաւի
է անձրեի, այնպէս էլ ժողովուրդը ծարաւի է
ճշմարտութեան և արդարութեան:

— Նայեցէ՛ք ժողովրդի այս մշտական խրմ-
քերին, որ ամեն տեղ շրջապատում են մեզ,
ասում էր Յիսուսն իր աշակերտներին. սրանք

Աստուծոյ արտերն են, Տիրոջ ցանքսերն են,
որոնց հնձելու ժամանակը վաղուց արդէն հա-
սել է: Նրանք հասել են Տիրոջ շտեմարանի
համար: Միայն արի' և հաւաքիր: Դէ՛հ, գնա-
ցէք այդ անտեր ոչխարների մօտ, աւետարանե-
ցէք, յաւսալրեցէ՛ք, որ նոր կեանքը կալ, որ
կարիքների ու տանշանքների դէմ կոռուելու
միջոցը զանուած է:

Այդ տեսակ քարոզը մեր ոյժերից էլ բար-
ձրը չէ:

Գնալ հեռաւոր երկրներ, աշխարհի ծայրը,
քարոզել ազատութեան խօսքը — այդ ամեն
մարդու բան չէ. ամեն մարդ հոգեկան այդ-
քան ոլժ չունի, բայց սիրոյ ու փրկութեան
խօսքերով դիմել մերծաւորին, մայրենի ազգի
խաւար զաւակներին — այդ կարող է անել
ամեն մարդ:

Եթէ մեր եղբայրներին շատ բան չենք կա-
րող սովորեցնել, զոնէ թիւը սովորեցնենք: Եթէ
նրանց մեծ ուսում տալ չենք կարող, զոնէ կա-
րող ենք ալբուրենք սովորեցնել:

Մեղանից ամեն մէկն այդ կարող է անել
և պարտաւոր է անել:

«ՄԻ ՈՐԵՒԿ ԲԱՆ»

Դասիացի լաւանի գրող Անդերսէնը մի շե-
քեաթ է զրել, որի վերնագիրն այսպէս է «Մի
որևէ բան»:

Այդ հեքեաթում պատմւում է, որ աշխարհում ապրում էին չորս եղբայրներ: Չորսն ելուզում էին իրանց կեանքում «Մի որևէ բան» արտած ինել:

— Ես պէտք է գոնէ «Մի որևէ բան» կատարած լինեմ, ասաց մէջ եղբայրը: Աւզում եմ մարդկանց օգուտ բերել, թէկուղ բոլորովին աննկատելի մնամ և ոչ ոքից գովաստնք չըստանամ: Եթէ մի փոքրիկ օգտակար գործ էլ է արած լինիմ, դարձեալ ինքո ինձանից գոհ կը մնամ, որովհետեւ՝ «Որևէ բան» արած կը լինիմ: Սրանից յետոյ էլ կըսկսեմ աղիւսներ պատրաստել աղիւսն ամեն մարդու էլ հարկաւոր է, ուրեմն՝ «Որևէ բան» արած կը լինիմ:

— Զէ, այդքանը շատ բիչ է, ասաց երկորդ եղանակը, ես քարտաշ-վարպետ կը լինիմ: Քաղաքում բազմաթիւ տներ կը շնուժ — այ, այդ արդէն անկասկած «Մի որևէ բան» կը լինի:

— է՛հ, ալգրանն էլ թիչ է, վրայ բերեց եր-
րորդ եղբայրը. շատ էլ վարպետ — քարտաշ
գարծար, այնուամենայնիւ հաստրակ ճար-
լինիս, իսկ ես ուզում եմ միքիչ աւելի աչքի-
ցնկող գործ անել: Եւ նկարչութիւն կը սո-
վորիմ, ճարտարապետ կը դառնամ և հազա-
րաւոր բանւորներ ու վարպետներ իմ հրամա-
նով կաշխատեն — այ, ալդ արդէն «Մի որեւէ
բան» կինի:

բան» կիինի:
— Ո՞չ, ասաց ամենափոքը եղբայրը, ես տես-
նում եմ, որ ձեզանից ոչինչ չի դռւրս դալ:
Ես ձեզ չեմ շետեի. — Ես այսուհետեւ կսկսեմ
քննադատել ձեր արածները: Աշխարհումս ամեն
մի բան անպատճառ որևէ պակասութիւն կու-
նենալի: Ես այսուհետեւ կաշխատիմ ամեն բանի մէջ
մի պակասութիւն գտնել, և ամենը կասեն. —

— Այ, աւեսէք, որբան խոլօք ամուլ, » և
մէջ արդէն «Մի որևէ բան» կայ:
Եւ զբանից յատոյ եղբայրներից ամեն ձեկն
էլ սկսեց իր վճռածն իրադորժել:

Մէկը իր ամբողջ կեանքում աղիւսամ էր
թափում. նա շարունակ աշխատում էր, չար-
չարում և հազիւ էր ճարում իր օրական պա-
րէսը, բայց աղնիւ կեանք էր վարում: Նա մի
սեփական անկիւն էլ է չունէր, ուր կարողա-
նար հանգստանա:

Զնալելով դրան, կոտրտած աղիւսներից նապառաւ Մարգարիտի համար ծովի ափում մի խրճիթ շինեց: Խրճիթը փոքր էր, պատուհան՝ թեք, դուռը ցածր, բայց այնուամենայնիւ խեղճ պառաւը կարող էր նրա մէջ պատրսպարուիլ ցրտից ու անձրևից:

Աղիւս շինողը շատ քիչ բան արեց, սակայն դա էլ «Մի որևէ բան» էր:

Երկրորդ եղբայրն աւելի լաւ զրութեան էր — նա փարպետ գարծաւ, ուրիշների համար մեծամեծ տներ շինեց և իր համար էլ նոյնպէս մի գեղեցիկ տուն կառուցեց:

Երրորդ եղբայրը նշանաւոր ճարտարապետ գարծաւ: Նա իր ծրագրով բազմաթիւ պատշաճ էանդանեցրեց և իր համար էլ մի հոյակապ պալատ շինեց, որ բաղաքի ամենալաւ շինութիւնն էր:

— Այս եղբայրն անկասկած «Մի որևէ բան» արեց, խօսում էին ամենքը:

Փոքր եղբայրը շարունակ աշխատում էր քննադատել ուրիշների արածը, շարունակ ուրիշների արածի մասին էր խօսում, ոչ մի բանի չէր հաւանում, ոչ ոքի արածից գոհ չէր և ամեն բանի մէջ մի պակասութիւն էր դանում: Մարդիկ նրա մասին տսում էին. —

— Օ, սա շատ խելօք մարդ է, սա նիշտ որ «Մի որևէ բան» արեց:

Բայց ահա նրա վերջին ժամն էլ հասաւ: Նա էլ միւս մարդկանց պէս մեռաւ: Դրախտի դռանը նրա հողին պատահեց աղքատ Մարդարարութիւն:

Պառաւի տեսքից նա զգուանքով ճակատը կնծոռաւեց, սակայն ստիպուած էր նրա հետ միասին սպասել դրախտի դռան բացուելուն: Ժամանակ անցկացնելու համար, նա հարժարեց Մարդարարի հոգուն:

— Հը, մամի, չինի՞ դու էլ ես ուզում այդտեղ մանել, ասաց նա և ցոյց առւեց դրախտը: Բայց «Մի որևէ բան» արևէ ես, որ այժմ դրախտն ես ուզում զնալ:

— Զէ, որդի՛, ես ոչինչ չեմ արել, պատասխանեց աղքատ պառաւը: Է՛հ, այստեղ էլ եխանեց աղքատ պառաւը: Է՛հ, այստեղ էլ եկել եմ, յուսալով, որ, ով գիտէ, կարելի է կել եմ, յուսալով, որ, ով գիտէ, կարելի է վրաս խղճահարուին, ներս թողնեն: Ես ի՞նչ կարող էի անել. — աղքատ, հիւանդ պառաւ եմ, բարի մարդկանց աղործութեամբ էի ապրում: Շնորհակալ եմ, ըստ եղբայրն ինձ համար մի խրճիթ շինեց, թէ չէ բոլորովին պէտք է կորչէի: Շէմքիցս միայն մի անգամ դուրս սոցական էի, այն էլ, քիչ մնաց սառչէի: Այս ձմեռը զացի, այն էլ, քիչ մնաց սառչէի: Այս ձմեռը շատ խիստ էր, ծովափը բոլորովին սառել էր:

Զահիները ուրախացած գուրս էին թափուել սառուցի վրայ սողալու, ամբողջ քաղաքը հաւաքուել էր նրանց նայելու։ Ակսեցին պարել, խաղալ, երգել, իսկ իմ խթթից ամբողջ սառուցը երեսւմ էր, կարծես ափիս վրայ լինէր։ Մէկ էլ յանկարծ ի՞նչ տեսնեմ. — Հեռուն, շատ հեռուն, այնտեղ, ուր սառուցը վերջանում էր, ծովի վրայ մի սկ ամպ երեաց։ Աստիճանաբար այդ ամպն սկսեց աճել, մեծանալ և ես հասկացայ, թէ ի՞նչ բան էր այդ ամպը. — Է՛հ, ես ծերացած էի, շատ բան էի տեսել. զիտէի, որ շուտով կատաղի փոթորիկ պէտք է սկսուի, ափի մօտ շուրը պէտք է բարձրանայ և սառուցը կոտրուի... Այնինչ ամբողջ քաղաքը սառուցի վրայ էր... Ի՞նչ կը լինի, եթէ նրանք չը նկատեն վրայ հասնող փոթորիկը։ Մի կերպ անկողնիցս գուրս սողացի, սկսեցի գոռալ, բայց ոչ ոք ծայնս չը լսեց։ Աւրախութիւնից խելքները կորցրել են, այնինչ ամպն աւելի ու աւելի մօտենում է։ Ի՞նչ անէի, նրանց ի՞նչպէս սառուցի վրայից հեռացնէի։

Աստուած ինձ օգնութեան հասաւ և միտքըս լուսաւորուեց. անկողնիս առակի ծզօտն այրեցի. ծզօտը իսկոյն բոցավառուեց, իսկ ես գուրս վաղեցի և այնտեղ և եթ ընկայ։ Ժո-

զովուրզը նկատեց հրդէհը, վազեց այս կողմը։ Նրանք մօտեցան ինձ, շրջապատեցին... Հէնց նոյն ըստէին բարձրացաւ կատաղի փոթորիկը և սառուցը չարգուեց, բայց բոլոր մարդիկ արդէն ափին էին։ Ցըտից ու երկիւղից ես բոլորովին հիւտնդացայ և շուտով մեռայ։ Այժմ սպասում եմ այստեղ, որ կարելի է վրաս խրդնան և ներս թողնեն, որովհետեւ ինքս ոչինչ չեմ արել և դրախաին արժանի չեմ։

Այդ ըստէին զըտխափ դուռը բացուեց և հրեշտակը կանչեց պառաւին։ Ներս մտնելով պառաւը ձեռքից ցած գցեց այն ծզօտը, որով կրակ էր տուել անկողնին և այնքան մարդկանց կեանքը Փրկել։

Ծզօտն իսկոյն ոսկի գարձաւ և ամենահրաշալի ծեւեր ընդունեց։

— Ահա թէ աղքատ պառաւն իր հետ ի՞նչ բերեց այստեղ, ասաց հրեշտակը, դառնալով լայտնի խելքին, որ ամենքին քննադատում էր։ Իսկ զու ի՞նչ ես բերել, ասա տեսնենք։ Է՛ք, յիշեցի, զու ամենախելօք մարդու հաձնա, յիշեցի, զու ամենախելօք մասին էիր մտաբաւն ունէիր, զու փառքի մասին էիր մարդում, աշխատում էիր մարդկանց մէջ յաջանի գառնալ։ Դու միայն քո մասին էիր մատանի գառնալ։ Դու միայն քո մասին էիր մատանի գառնալ։ Դու ուղղում էիր ինքդ բարձրանալ և ժում։ Դու ուղղում էիր ինքդ բարձրանալ և ժում։ Բէք ուրիշներին բարձրացնել։ Աւրիշների ոչ թէ ուրիշներին բարձրացնել։

համար զու մատղ մատիդ չես զարկել։ Նոյն իսկ զու մի աղիւս էլ չինցիր Ա՛խ, եթէ զու կարողանալիր յետ գասնալ աշխարհը և այնտեղից զոնէ մի աղիւս բերէիր, թէն քո բերած աղիւսը դժուար թէ բանի պէտք զար, քայց զոնէ կը տեսնէինք, որ «Մի որեւէ բան» անելու ցանկութիւն ես ունեցել։ Իսկ այժմ իս չմ կարող քեզ ոչ մի բանով օգնել։

Այդ լսելով, մէջ մտաւ պառաւ կինը։ —

— Սրա եղբայրը ինձ համար այնքան աղիւսների կաուրներ բերեց, որ ես մի ամբազշ խրճիթ շինեցի ինձ համար, իսկ խրճիթն ինձ համար մի ահազին զանձ էր — թող միրանի աղիւսի կաորն էլ սրա համար հաշուի, սրա եղբայրն ինձ ահազին օգնութիւն արեց, այժմ սու է օգնութեան կարօտ։

— Քո եղբայրը, որին զու այնպէս անպէտք էիր համարում, խօսեց հրեշտակեր, որի ալհետար զու այնքան անպատուաթեր էիր համարում, այժմ քո փոխարէնը լումայ է մացնում երկնալին գանձարանը։ Այս իսկ պատճառով քեզ կանդնած տեղիցդ զուրս չմ անի, կաց ալգտեղ, դռան մօտ և մտածիր, թէ ինչպէս կարող ես ուղղել քո երկրային կեանքը, որն այնպէս անպէտք ես անցկացրել։ Քայց լաւ իմացիր, որ քեզ զրախարը չենք թողնիլ,

մինչեւ որ խոկապէս «Մի որեւէ բան» կատարած վինիս։

Եղսպէս ուրիշն, բանից զուրս եկաւ, որ ամենաթանկազին կեանքը աղբատ պառաւի կեանքն էր, իսկ չորս եղբայրներից ամենքից շատ բարութիւն նա էր արել, որը մի հաստ բանուոր էր և աղիւս էր շինում։ Մարդակ բանուոր էր և աղիւս էր շինում։ Մարդակ միայն այն ժամանակ «Մի որեւէ բան» աղբը միայն այն ժամանակ «Մի որեւէ բան» աղբը կինի, իրանից յետով բարի անուն կը թողած կինի, իրանից յետով բարի անուն կը թողած նի, եթէ նրա սրառում կայ «Մի որեւէ բան»։

Իսկ եթէ մարդու սրտում կայ «Մի որեւէ բան», նրա կեանքի արտաքին կեղեք, ինչ տերան, սուկ էլ որ լինի, ինչ զիրը էլ որ ունենայ նա, ինչքան յետ ընկած տեղում էլ որ տպրի, այնինչքան յետ ընկած տեղում էլ որ տպրի, այնուամենայնիւ միշտ կարող է «Մի որեւէ բան» անել։ Եթէ այդ «Մի որեւէ բանը» աննկատելի մնայ աշխարհում, մարդկանցից չը գնահատւի, բայց Աստուծոյ աչքում հրաշալի գեղեցիկ գործ կը լինի, ինչպէս որ այն չնչին ծզոտը, որով պառաւ կինը կրակ էր զցել իր խրճիթը՝ հարիւրաւոր մարդկանց կեանքը փրկելու համար։

Մարդկանց խելքով ծզոտը պէտք էր աղբի մէջ զցել, իսկ Աստուծոյ դատաստանով նա գրախանի ամենալաւ ծաղիկը զարձաւ։ Աղբատ կինն կը «Մի որեւէ բան» արդէ էր։

Այս, եթէ այս՝ «Մի որևէ բան» վերնաղը ով
փոքրիկ պատճռութիւնը ընթերցողի սրտու ծ
«Մի որևէ բան» դարձեցնէր՝ այդ ճիշտ որ
«Մի որևէ բան» կը լինէր:



ԲԺ. Ա. ԲՈՒՂՋԱԿԵՑՆԻ

ասր լուր անօսմ զրբայիները.

1. Գործարան թիւ երկարագում թիւն . 15 հ.
2. Անապաշտութիւն և կախարգութիւն 20 հ.
3. Մակրամահան խորհու բջնիք
պատասխանելին . 20 հ.
4. Գործաթեան կոփ 20 հ.
5. Առաջորդ Վերխոնդ 25 հ.
6. Աւր և խոնդ 20 հ.
7. Պատճենութիւն և անառակութիւն . 20 հ.

ՅԱՎԱԾԱԿԱՅ ԱՐԱՄԵԱՆՑԻ

վերջին հրատարակութիւնները

1. Անորութիւն կաթոնատուների 15 հ.
2. Առաջորդ Վերխոնդ 25 հ.

Դիմել հայ գրավաճառանոցները

ՀՀ Ազգային գրադարան



NL0312858

12.847

ՄԵՐ ԼԺԱԾԱԿՑՈՒՅԹ ՎՐԱԴԲՈՒՅՆ

1. Քոզր կրօստ 4 10 դ.
2. ճշմարիտ մեծութիւնը 7 "
3. Արդար մերանին 10 "
4. ՄԼՃ տան 10 "
5. Նոր լոյն 10 "

89171
7-50